

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱԽԱՌԸ 1920Ի ԹՈՒՐԶ- ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ
karine.aleksanyan@yahoo.com

1920 Սեպտեմբերի 23ին սկսուող թուրք-հայկական պատերազմը ի սկզբանե անյաջող ընթացք ունեցավ հայկական կողմի համար: Հայկական բանակը չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ: Կարճ ժամանակում հայկական ուժերին քանակապես գերազանցող թուրքական զորքը գրավեց Սարիղամիշն ու Մերզենէկը: Կառավարութիւնը մի շարք արտակարգ միջոցառումներ ձեռնարկեց երկիրը պատերազմական պայմաններին համապատասխանեցնելու համար¹: Նա դիմեց նաեւ դիւանագիտական քայլերի՝ դրսից օգնութիւն ստանալու համար: Սակայն Դաշնակից երկրները հայ ժողովրդի համար այդ ճակատագրական պահին թողեցին նրան միայնակ: Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանի կառավարութեանը, ապա վերջինս վարում էր չմիջամտելու քաղաքականութիւն, նպատակ ունենալով յարմար առիթն օգտագործելով հասնել Հայաստանի խորհրդայնացմանը:

1920 Հոկտեմբերի 30ին, առանց լուրջ դիմադրութեան ընկաւ Կարսը: Կարսի անկումը փաստօրէն լուծեց պատերազմի ելքը²: Նոյեմբերի 7ին գինադադարի պայմաններով թուրքերին յանձնուեց Ալեքսանդրապոլ քաղաքն ու բերդը: Կարաբեքիրը առաջարկած գինադադարով հայերին ստիպեց փաստօրէն առանց դիմադրութեան իրեն յանձնել Ալեքսանդրապոլը եւ զրկուել կարեւոր ռազմավարական դիրքերից³: Այնուհետեւ Նոյեմբերի 8ին առաջարկեց գինադադարի շատ աւելի ծանր պայմաններ՝ նպատակ ունենալով մերժման դէպքում, զարգացնել ռազմական յաջողութիւնները եւ գրաւել Ալեքսպոլի գաւառը: Կարաբեքիրի հաշիւները ճիշտ դուրս եկան: Հայաստանի կառավարութիւնը անընդունելի համարեց այդ առաջարկները⁴: Թուրքական զորքերը, վերսկսելով ռազմական գործողութիւնները, գրաւեցին Ալեքսպոլի գաւառը: Հարկ եղաւ ռազմական գործողութիւնների մի քանի օր, որպէսզի Հայաստանի կառավարութեանը պարզ դառնար, որ հաշտութեան կնքումն ամէն զնով անհրաժեշտ էր: Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ թուրքական զորքերի առաջխաղացումը կասեցնելու վերջին ճիգերը ձախողուեցին, բանակի բարոյալքումը յաղթահարել չյաջողուեց: Հայոց բանակն անհաղորդ մնաց կառավարութեան կոչերին եւ ձգտումներին: Ալեքսպոլի գաւառի անպաշտպան մնացած գիւղացիները ստիպուած եղան «ազ ու հացով» դիմաւորել իրենց թշնամուն⁵:

Դեռեւս 1918ին Ալեքսանդրապոլը գրաւելու ժամանակ թուրքերի կողմից կոտորուում էին ամբողջովին այն գիւղերը որոնք չէին յայտնում իրենց հնազանդութիւնը եւ գէնք էին բարձրացնում նրանց դէմ: Կան բազմաթիւ արխիւային փաստեր այս մասին: Ահա դրանցից մէկը՝ Գիւմրիի գաւառի վարչութեան նախագահ Մեհմէտ Ռեջիդի տեղական վարչութեան նախագահին ուղղուած հրամանում տեղեկացում է, որ Սոգուժլու ուղարկուող թուրք զինուորներին դիմադրելու համար Արթիկ, Շիրվանջուղ եւ Մահմուդջուղ գիւղերի բնակիչները զինուորական օրէնքի խստութեամբ պատժուած են, պահանջուում

է մէկ անգամ եւս գիւղական բնակչութեանը յայտարարել զինուորների դէմ գէնք բարձրացնող գիւղերի ոչնչացման մասին օրէնքը: Ինչ վերաբերում է 1920ին, ապա այս մասին անուղղակիօրէն վկայում է Վահէ Արծրունին իր գրքում, նշելով որ հայկական գիւղերը գրաւոււմ էին առանց դիմադրութեան, իսկ այն գիւղերը, որոնք դիմադրում էին՝ ամբողջովին ոչնչացոււմ էին, ինչպէս՝ Մեծ Արթիկ, Ջրախլու, Հաճի Նազար⁷:

Հայաստանի կառավարութիւնը հրաժարուեց Նոյեմբերի 8ի զինադադարից եւ շարունակեց պատերազմը յոյսը դնելով ոչ-այնքան հայոց բարոյալքուած բանակի, որքան՝ դիւանագիտական միջնորդութեան վրայ: Կառավարութեան համոզմամբ՝ թէ՛ Խորհրդային Ռուսաստանը եւ թէ՛ Անտանտը չէին կարող թոյլ տալ թուրքերի յետագայ առաջխաղացումը, քանի որ ըստ իրենց, դա նրանց հաճեցից չէր բխում: Դժբախտաբար Հայաստանի կառավարութեան հաշուարկները սխալ դուրս եկան: Դաշնակիցները չմիջամտեցին յոյս ունենալով, որ թուրք-հայկական պատերազմում թուրքերի առաջխաղացմանը կը յաջորդի թուրքական նուաճման ընդլայնումը Անդրկովկասում, ինչը կը յանգեցնի Խորհրդային Ռուսաստանի եւ թուրքիայի միջեւ պատերազմի: Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանին, ապա այն տալով դիւանագիտական միջնորդութեան համաձայնութիւնը, ռազմական օգնութիւնը պայմանաւորում էր նախ Սեւրի Պայմանագրից հրաժարմամբ, ապա եւ Հայաստանի խորհրդայնացմամբ⁸:

Հայաստանի կառավարութիւնը Նոյեմբերի 15ին որոշում ընդունեց թուրքական պայմաններն ընդունելու մասին եւ պատուիրակութիւն ուղարկեց Ալեքսանդրապոլ՝ զինադադար կնքելու համար: Ներքին Գործերի նախարար Սարգիս Արարատեանի գլխավորութեամբ պատուիրակութիւնը կնքեց վերջնական զինադադար, որի համաձայն հայկական զինուած ուժերը ետ քաշուեցին՝ զբաղեցնելով Որթնաւ-Բաշ Ապարան-Դանագիրմազ-Սոնգուրլու-Ղրմզլու-Այազեագ գիծը: Թուրքերը բանակցութիւնների նախօրեակին գտնուում էին Նալբանդ կայարանի, Մեծ Պարնի, Ջրախլի, Ղոլղաթ, Ղուլիջան, Արթիկ, Սոնգուրլու գիւղերի սահմաններում: Այստեղից մինչեւ Բաշ Ապարան եւ Թալին ընկած տարածքը յայտարարուեց «չէզոք գօտի»: Այս գօտու մէջ ընկան 45 գիւղեր, որոնք շուտով լցուեցին Տաճկաստանից, Սարիղամիշից, Կարսից, Ալեքսանդրապոլից եւ այլ վայրերից եկած գաղթականներով⁹:

Հայաստանի կառավարութիւնը, քիչ աւելի ուշ՝ Դեկտեմբերի 2ին, ստիպուած եղաւ կատարել անխուսափելի՝ իշխանութիւնը յանձնել բոլշեւիկներին: Իսկ Դեկտեմբերի 2ի լոյս 3ի գիշերը, երբ արդէն Հայաստանը խորհրդայնացել էր եւ կառավարութիւնը վայր էր դրել իր լիազօրութիւնները, Հայաստանի կառավարութիւնը կնքեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Թուրքերն այս անգամ արդէն հրաժարուելով Խորհրդային Ռուսաստանի միջնորդութիւնից, շտապեցնում են կնքել հաշտութեան պայմանագիրը, ակնարկելով, որ հակառակ դէպքում կը շարժուեն Երեւանի վրայ: Հայաստանի կառավարութիւնը ուղղակի բանակցութիւնների մէջ մտնելով թուրքերի հետ, փորձեց ամէն գնով կանգնեցնել նրանց արշաւանքը, փրկել Հայաստանի մնացած բնակչութեանը կոտորածներից մինչեւ նոր կառավարութեան կազմուելը եւ Կարմիր Բանակի մուտքը Երեւան:

Թուրքիայի պարտադրանքով Հայաստանը հրաժարուեց Սեւրի դաշնագրից: Թուրքիային անցան Կարսի Մարզը եւ Սուրմալուի Գաւառը: Վերջինս, ի

դէպ, երբեք չէր եղել Թուրքիայի կազմում: Նախնիների մարզն անցաւ Թուրք-իայի հովանու տակ, որն այնուհետեւ Մոսկուայի Պայմանագրով յանձնուեց Ա-դրբեջանին: Հայ-թուրքական սահմանը դարձան Ախուրեան եւ Արաքս գետերը:

1920ի Թուրք-Հայկական պատերազմը, թերեւս հայոց նորագոյն պատմու-թեան ամենաողբերգական էջերից է: Պարտուելով այստեղ, հայերը զրկուեցին թէ՛ իրենց պետականութիւնից, թէ՛ կորցրեցին հայկական հողերը մէկ միաս-նական պետութեան մէջ միաւորելու բացառիկ հնարաւորութիւնը, թուրքերին զինեցին նորանոր տարածքներ, կրեցին նիւթական հսկայական վնասներ, այլեւ ցեղասպանութեան ենթարկուեց արեւելահայ մի խոշոր հատուած եւս:

Բացառիկ ծանր հետեւանքներ ունեցաւ այս պատերազմը յատկապէս Ալեք-սանդրապոլի Գաւառի բնակչութեան համար: Հայկական բանակի բարոյալք-ման պայմաններում Թուրքերը, ռազմական գործողութիւնները զուգակցելով դիւանագիտական խարդաւանքներին, հեշտութեամբ գրաւեցին Ալեքսանդրա-պոլն ու Գաւառը: Չնայած 1921 Մարտի 16ի Մոսկուայի Պայմանագրով Ալեք-սանդրապոլի Գաւառը մնում էր Հայաստանին, Թուրքական բանակը կառչելով 1920 Դեկտեմբերի 2ի Ալեքսանդրապոլի Պայմանագրի առանձին կէտերից, մաս-նաւորապէս Հայաստանի մաս ճանաչուած, բայց Թուրքերի կողմից զինակալ-ուած տարածքներին վերաբերող կէտից, ամբողջ վեց ամիս չհեռացաւ Ալեք-սանդրապոլի Գաւառից: Միայն 1921 Ապրիլի 22ին ցեղասպանութեան ենթար-կելով արեւելահայութեան մի խոշոր հատուածի եւ մինչեւ վերջին հնարաւորու-թիւնը թալանելով եւ կոտորելով գաւառի բնակչութեանը նա լքեց տարածքը:

Թերեւս ամենաողբերգականն այս պատերազմում իր դարաւոր թշնամուն «աղ ու հացով» դիմաւորող Ալեքսանդրապոլի Գաւառի հայ գիւղացին էր եւ՝ Ալեքսանդրապոլի Յեղկոմն իր տիրահռչակ գործունէութեամբ¹⁰: Թուրքերը գործնականօրէն ապացուցելու համար, որ իրենց առաջխաղացումը պայմանա-ւորուած էր Խորհրդային Ռուսաստանի շահերով եւ նպատակ ունենալով խոր-հրդայնացման խաղաքարտն օգտագործելով գրաւել ամբողջ Հայաստանը, Ա-լեքսանդրապոլ մտնելու առաջին օրուանից տեղի բոլշեւիկների միջոցով սկսե-ցին իրենց բոլշեւիկ լինելու մտայնութիւնը տարածել բնակչութեան մէջ¹¹:

Ալեքսանդրապոլի բոլշեւիկները, փորձելով փրկել բախտի քմահաճոյքին մնացած բնակչութեանը Թուրքական սարսափներից, համաձայնեցին Ալեքսա-պոլում խորհրդային իշխանութիւն հռչակելու Թուրքերի առաջարկին¹²:

Ալեքսանդրապոլի կոմունիստները հաւատացած էին եւ բախտի քմահաճոյ-քին մնացած բնակչութեան էլ հաւատացնում են, թէ խորհրդային կարգերի հաստատումը կը փրկի նրանց Թուրքական սարսափներից, քանի որ իբր՝ Թուրքերի նպատակը միայն դաշնակցական կառավարութեան տապալումը եւ բանուորագիւղացիական իշխանութեան հաստատումն է¹³:

Չնայած կառավարութեան որոշմանը, թէ՛ Թուրքերի կողմից Ալեքսապոլը գրաւելու դէպքում քաղաքում պէտք է մնան քաղաքացիական վարչութեան անդամները, չլքանային ինքնավարութեան նախագահը, վարչութեան անդամ-ները եւ բոլոր պաշտօնեաները, Նոյեմբերի 5ի լուսաբացին նրանք թողնում են քաղաքը՝ մատնելով այն անիշխանութեան, աւերման ու հրդեհման¹⁴:

Ստեղծուած իրավիճակում Նոյեմբերի 5ի լուսաբացին բոլշեւիկները, դուրս գալով բանտից, փորձում են իրենց ձեռքը վերցնել իշխանութիւնը: Սակայն Սեպուհը բոլշեւիկներին սպառնում է ձերբակալութեամբ, եւ վերջիններս հար-

կադրուած անցնում են ընդյատակ: Այս ամէնից յետոյ միայն Զօր. Միլիկեանի թոյլտուութեամբ ընտրուում է տասնհինգ հոգուց բաղկացած կոալիցիոն մարմին (ժողովրդականներից ու սոցիալ-դեմոկրատներից)՝ Լեւոն Սարգսեանի գլխաւորութեամբ, որը պէտք է ձեռնամուխ լինէր քաղաքի գործերի կարգաւորմանը: Սարգսեանը նշանակուում է նաեւ Ալեքսանդրապոլում Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ, իսկ խորհրդականներ նշանակուում են Ե. Միրաքեանն եւ Պ. Շերմազանեանը¹⁵:

Ալեքսանդրապոլի իշխանութիւնները՝ Լ. Սարգսեանի գլխաւորութեամբ, փորձում են խանգարել թուրքերի եւ բոլշեւիկների յարաբերութիւնները, բայց դա նրանց չի յաջողուում: Թուրքերը բոլոր գործերը կարգաւորում են բոլշեւիկների հետ՝ հեղինակազրկելով Սարգսեանի գլխաւորած կոալիցիոն իշխանութիւնը, եւ ի վերջոյ հասնում Ալեքսանդրապոլում խորհրդային իշխանութեան հաստատմանը¹⁶:

Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչների հետ նոր գինադադար կնքելու բանակցութիւնները զուգակցուում են թուրքերի եւ բոլշեւիկների միջեւ ընթացող բանակցութիւններով: Նոյեմբերի 17ին Ալեքսանդրապոլում ստեղծուում է խորհրդային իշխանութեան մարմին՝ յեղկոմ՝ յեղափոխական կոմիտէ¹⁷:

Թուրքերն Ալեքսանդրապոլում հռչակում են խորհրդային իշխանութիւն՝ նպատակ ունենալով իրենց ձեռքը վերցնել Հայաստանի խորհրդայնացման նախաձեռնութիւնը¹⁸: Պատահական չէ, որ նրանք Ալեքսանդրապոլի խորհրդային իշխանութիւնը ճանաչեցին այնքանով, որքանով այն պէտք էր իրենց մտադրութիւնները իրականացնելու համար: Այստեղ գործեցին միայն իշխանութեան այն մարմինները, որոնց միջոցով թուրքերն իրականացնում էին բնակչութեան թալանն ու բռնութիւնը¹⁹: Մասնաւորապէս ներքին Գործոց Բաժինն ու Արտակարգ Ցանձնաժողովը իսկական պատուհաս դարձան թուրքական սարսափներն ապրող Ալեքսանդրապոլի Գաւառի բնակչութեան գլխին: Թուրքերի կողմից իրականացուող բռնութիւնների ու թալանի քաղաքականութիւնն ուղեկցուում էր յեղկոմի կողմից իրականացուող կտրուկ միջոցներով: 1921 Յունուարի 25ին միայն յեղկոմը, հասկանալով թուրքերի իսկական նպատակները, վայր դրեց իր լիազօրութիւնները²⁰:

Թուրքական գինուորական հրամանատարութիւնը անմիջապէս ձեռնամուխ եղաւ տեղական իշխանութեան նոր մարմինների ձեւաւորմանը²¹:

Նրանց աջակցութեամբ քաղաքային ոստիկանապետ Սերգէյ Մատինեանն իրեն հռչակեց քաղաքապետ (դիկտատոր), գրեթէ միաժամանակ կեանքի կոչուեցին քաղաքային ինքնավարութեան մարմինները՝ Քաղաքային Խորհուրդն ու Վարչութիւնը²²:

Այս դէպքերի լուսաբանումը լուրջ խնդիրներ է դրել հայ պատմագրութեան առջեւ: Սակայն արխիւային նիւթի պակասը եւ իրադարձութիւնները զաղափարաքաղաքական նկատառումներով բացատրելու հանգամանքը հնարաւորութիւն չեն տուել հայ պատմաբաններին պատասխանելու վերոյիշեալ հարցերին: Աւելին, համահայկական նշանակութիւն ունեցող այս հարցերի լուսաբանումը, որոնք ուղղակիօրէն կապուած են «Ինչու՞ ընկաւ կարսը» հարցի հետ, յաճախ տեղայնացուում են, կապուում ալեքսանդրապոլցիների բնաւորու-

թեան հետ: Վերջիններս մեղադրում են բոլշեիկների եւ թուրքերի հետ համագործակցելու, նրանց դէմ չկռուելու մէջ:

Մինչդեռ կարծում ենք այս հարցերի պատասխանը կարելի է ստանալ նախքան պատերազմը Ալեքսանդրապոլի գաւառում տիրող սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, վարչա-իրաւական եւ բարոյա-հոգեբանական իրավիճակի ուսումնասիրութիւնից յետոյ միայն եւ թերեւս այլ՝ ընդհանրապէս Հայաստանի Հանրապետութեան քաղաքական ու կից երկրներում՝ Ադրբեջանում ու Վրաստանում, զարգացող իրադարձութիւնների նկատման ներքոյ իրադարձութիւնների նման զարգացմանը մեծապէս նպաստեց նաեւ ստեղծուած միջազգային իրադրութիւնը: Մասնաւորապէս Խորհրդային Ռուսաստանի եւ Անտանտի հակասութիւնները, որից այդքան վարպետօրէն կարողացաւ օգտուել թուրքական դիւանագիտութիւնը:

Ստորեւ ներկայացուող փաստաթղթերի հաւաքածուն նպատակ ունի գէթ մասամբ լրացնել այս շրջանի ուսումնասիրութեան աղբիւրագիտական բացը: Հրատարակուող փաստաթղթերը ներկայացնում են Ալեքսանդրապոլի գաւառում ստեղծուած բացառիկ ծանր ընկերային-տնտեսական վիճակը, ինչպէս նաեւ 1918ի թուրքական արշաւանքի աւերածութիւնները յաղթահարելու, մեծաթիւ գաղթականութեանը սովից փրկելու հրամայականի առաջ կանգնած տեղական իշխանութիւնների գործունէութիւնը: Ներկայացուող փաստաթղթերը վկայում են տեղական կառավարութեան կողմից կազմակերպչական աշխատանքների, բնակչութեան կողմից թուրքական վտանգը զգալու եւ այն կանխելու փորձերի մասին:

Գաւառում տիրող հասարակական-քաղաքական եւ իրաւական դրութեան իրական պատկերը տալու առումով բացառիկ փաստաթուղթ է Շիրակի նահանգապետ Կարօ Սասունու իրաւախորհրդատու Գէորգ Խոյեցեանի զեկուցումը նահանգապետին:

Փաստաթղթերը վկայում են նաեւ թուրքերի խարդախ քաղաքականութեան մասին:

Հրապարակուող փաստաթղթերը տպագրւում են առաջին անգամ, բնագրի լեզուով, կէտադրական եւ ուղղագրական որոշ շտկումներով: Վերնագրերը մենք ենք դրել՝ համապատասխանեցնելով նիւթի բովանդակութեանը:

Բոլոր փաստաթղթերը պահւում են Հայաստանի Ազգային Արխիւում:

ԱՅ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱԳԼՈՒԽ Հ. ՄԵԼՔՈՆԵԱՆԻ²⁴
ԳՐՈՒԹԻՒՆԸ ՀՀ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ²⁵ ԲԱՂԱՔՈՒՄ
ՏԱՐԱԾՈՒԱԾ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

22 Յունուարի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Քաղաքումս տարածուել են տարափոխիկ հիւանդութիւններ սպառնալի չափերով: Համաձայն բժշկական ընկերութեան կարծիքի բոլոր դպրոցների աշակերտութիւնը արձակուած է մէկ շաբաթով՝ հիւանդութիւնների դէմ կռուելու համար:

Շուտափոյթ հարկատր է մէկ միլիոն ոտքի, խնդրում ենք փոխադրել էպիդեմիայի²⁶ առաջն առնելու համար:

Մայրոնեան

Բ²⁷

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱԳԼԽԻ ՏԵՂԱՊԱՀԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ՝ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ
ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

15 Ապրիլի 1920թ.

Երեսան

Համաձայն Ներքին Գործոց Մինիստրության Զինատրության գործերի
գլխատր վարչության ս/ք Մարտի 31-ի N 1435 գրությամբ Վարչութիւնս
սրանով յայտարարում է, որ քաղաքային ինքնավարության բոլոր 16-43
տարեկան հասակ ունեցող ծառայողները 7 օրուայ ընթացքում պարտաւոր են
իրենց մօտ ունենալ վկայականներ կամ այլ փաստաթղթեր տրուած
զինատրության ատենաների կողմից իրենց հասակի եւ զինուորական
ծառայութեան վերաբերեալ յիշեալ ժամանակաշրջանում. որ ծառայողների
մօտ որ չեն լինի յիշեալ վկայականները նրանց դէմ ձեռք կ'առնուի
համապատասխան միջոցներ:

Քաղաքագլխի Տեղապահ Պարոյր Գեօնջեան²⁸

Քարտուղար <ստորագրութիւն>

Գ²⁹

ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԾԻՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ³⁰
ԳՐՈՒԹԻՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՇԽՄԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ՝
ՆՊԱՍՏՆԵՐԸ ԿՐՃԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

19 Ապրիլի 1920թ.

Երեսան

Այլի առաջ ունենալով պետական ալիքի պաշարի քչութիւնը եւ որ դրսից
այլեւս նոր պաշար չի ստացուելու, յայտնում են Ձեզ ի գիտութիւն, որ
Ալեքսանդրապոլի ամբողջ գաւառում եւ նրան կցուած մասերում (Թալինի
շրջան, Արեւմտեան Շիրակ եւ այլն) այսուհետեւ ձրի նպաստ պիտի տրուի
ըստ նորմայի (կէս ֆունտ) ոչ աւելի քան մի հարիւր հազար անձի: Քաղաքի
մէջ ոչ ոքի ձրի հաց չի տրուելու, իսկ դրանով ամբողջ քաղաքին, գաւառին,
երկաթուղային վարչութեանը եւ միւս բոլոր հիմնարկութիւններին մէկտեղ
պէտք է տալ ոչ աւելի քան իննսուն հազար (90000) անձի: Մինչեւ այժմ եղած
բութիւն կրճատումը եւ ներկայ գրութեան մէջ եղած չափերին հասցնելը
բողնում է Ձեզ եւ գաւառական ինքնավարութեան վարչութեանը:

Խնամատարութեան եւ Վերաշինութեան Նախարար

<Ա. Բաբալեան>

Դիւանապետ

Դ³¹

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՅՐ ԳԵՕՆՁԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆԸ³² ԲԱՂԱՔԻ ՉՔԱՒՈՐ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ ՁՐԻ
ՀԱՅ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

20 Ապրիլի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Խնդրում ենք հեռագրով պատասխանել ինչ չքաւորների է վերաբերում
Ձեր N 781418 հեռագիրը: Քաղաքում, բացի զանազան շրջանների գաղթա-

կաններից, ձրի հաց են ստանում Ալեքսանդրապոլ քաղաքի ազգաբնակչության չքատուր դասը, թուով 9900 հոգի: Մինչև Ձեր հեռագրի ստանալը Խնամատարության Նախարարության տեղիս ներկայացուցչի կարգադրությամբ գաղթականությանը տրուած է ժամանակ մինչև 25-ը Ապրիլի տեղափոխուել գիտերը, բացի արհեստատուներից եւ հիմնարկութիւնների ծառայողներից: Որովհետեւ շուկայում ալիւր չլինելու պատճառով հացի ֆունտը ծախսում է 60-70 ռուբլիով, քաղաքացի բնիկ ազգաբնակչության չքատուր դասին անհրաժեշտ է շարունակել բաց թողնել հաց մախկին կարգով:

Քաղաքագլխի Պաշտօնակատար՝ Պ. Գեօնջեան

Ե³³

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ ՊԱՐՈՅՐ
ԳԵՕՆՋԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՊԱՌԼԱՄԵՆՏԻՆ, ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ ՀԱՅՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

27 Ապրիլի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Կառավարչական պահեստում ալիւրի պակասելու պատճառով եւ նոր ալիւրի ուշանալու շնորհիւ ամերիկական կառավարության ներկայացուցչի կարգադրությամբ³⁴ քաղաքում փողով հաց ստացող ժողովրդին պարեն տալը ժամանակատրապէս դադարեցում է: Այդ առթիւ այսօր առաւօտուց մինչեւ ուշ գիշեր քաղաքի բազմահազար ազգաբնակչութիւնը դիմելով քաղաքային վարչութեանը եւ բաշխման կոմիտէի շէնքը, կտրուկ կերպով խնդրում է եւ պահանջում կառավարութիւնից հացի բաշխումը շարունակել ի նկատի առած շուկայում մասնատու հացի բացակայութիւնը, որի շնորհիւ վերջին մի շաբաթուայ ընթացում հացի գինը 40 ռուբլուց բարձրացել է 60-70 ռուբլու, իսկ այսօր մինչեւ 100 ռուբլի եւ այն էլ չի ճարում:

Ալեքսանդրապոլի շրջանը եւ քաղաքի ազգաբնակչութիւնը դեռ խաղաղ ժամանակ էլ տնտեսապէս վատ դրութեան մէջ էր՝ համեմատած միւս վայրերի հետ, իսկ ներկայումս գտնուում է ճգնաժամային դրութեան մէջ շնորհիւ տաճկական բանակի անբաժնութիւնների³⁵ եւ մի շարք աննպաստ պայմանների, որոնք թոյլ չէին տալիս ժողովրդին վերականգնելու քայքայուած տնտեսութիւնը: Այսօր երեկոյեան բազմամարդ հասարակական ժողովը ներկայութեամբ զինուորական, խնամատարութեան, ֆինանսների, ներքին գործոց նախարարութիւնների, գաւառական զեմստոյի³⁶, քաղաքային վարչութեան ներկայացուցիչների եւ ժողովրդի ընտրուած ներկայացուցիչների ուրոշեց դիմել Ձեզ հետեւեալ խնդիրներով՝ առաջին, դիմել ամենակտրուկ միջոցների ալիւրը իր ժամանակին տեղ հասցնելու նպատակով. երկրորդ, դիմել ձեր միջոցով ամերիկական կառավարութեան ներկայացուցչին բաց թողնել վճարով հաց ստացողների ալիւր. երրորդ, ժամանակատրապէս յետաձգել խնամատարութեան միմիստրութեան կարգադրութիւնը գաղթականութեանը եւ բնիկ քաղաքացի չքատուրների հացը դադարեցնելու վերաբերեալ մինչեւ գաղթականութեանը մաս-մաս Ղարսի շրջան փոխադրելը եւ քաղաքի ամենածայրայեղ չքատուրների վերջնական ցուցակները կազմելը, չորրորդ, եթէ հնարատու է վերացնել Աղբաբայի³⁷ շրջանում մսացունների եւ այլ կենսամթերքների գնումների արգելումը համաձայն մինֆինի³⁸ կարգադրութեան: Ի նկատի առած մոմենտի լրջութիւնը եւ մի շարք տեղական պայմանները, օրի-

նակ զինակոչի հարցը, ապագայ բարդությունները կանխելու համար կառավարության եւ ժողովրդի շահերի տեսակետից անհրաժեշտ է առաջին երեք կետերի վերաբերեալ անել շուտափոյթ կարգադրութիւն եւ որի մասին խնդրում ենք տեղեկացնել հեռագրով:

Ի դիմաց ժողովականների
քաղաքագլխի պաշտօնակատար՝ Պ. Գեօնջեան

Ջ³⁹

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՇԽՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԳԱՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ
ԽՆԱՄԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

22 Մայիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Երկրորդ ամիսն է ժողովրդին պարեն չի տրուում: Չքատր դասակարգը կերակրում է կանաչով⁴⁰: Եղել են սովամահութեան շատ դէպքեր: Խնդրում ենք միջոցներ ձեռք առնել, շտապել պարեն հասցնել ժողովրդին, սովից ազատելու համար:

Միւրան Գրիգորեան⁴¹

Է⁴²

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՅՐ ԳԵՕՆՋԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ԽՆԱՄԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

27 Մայիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Քաղաքում գտնուող ազգաբնակչութեանը, գաղթականութեանը, քաղաքի ջրատր դասին եւ հիմնարկութիւնների ծառայող խմբին պարենը դադարեցուած է: Ժողովուրդը սոսկալի դրութեան մէջ է: Խնդրում ենք ձեր հեռագրական միջնորդութիւնը ուր հարկն է, որ կարգադրուի տեղական Ամերիկեան Կոմիտէին բաց թողնել ալիւրի փոխարէն լոբի, բրինձ կամ ուրիշ մթերք, մինչեւ նոր ալիւրի ստացուելը: Շուկայում հաց բոլորովին չկայ:

Քաղաքագլխի Պաշտօնակատար՝

Գեօնջեան

Ը⁴³

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՅՐ ԳԵՕՆՋԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ԽՆԱՄԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ՕՐՀԱՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

29 Մայիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Քաղաքում գտնուող հասարակութիւնը, հիմնարկութիւններն ու բանտերը, հիւանդանոցները, բանտորութիւնը մնացել են առանց պարենի: Դրութիւնն օրհասական է: Ժողովուրդը մի քանի օր է կանաչով է ապրում: Երկրորդ անգամ է խնդրում ենք Ձեր միջնորդութիւնը [միջամտելու] տեղական Ամերիկեան Կոմիտէին՝ բաց թողնել 7 օրուայ համար 1 ֆունտով լոբի կամ բրինձ՝ որքանոցների⁴⁴ պաշարից, մինչեւ ալիւրի ստացուելը: Սպասում ենք հեռագրական կարգադրութեան:

Թ⁴⁵

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԲԱՇԽՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ՀՀ ԽՆԱՄԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱՇԽՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ ՀԱՅ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 Յունիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Ձեր հեռագրական կարգադրութեամբ Բաշխման Կոմիտեն Ալեքսանդրապոլ քաղաքում եւ շրջանում հաց պէտք է բաշխի փողով 50000 անձի: Խնդրում ենք հեռագրով պարզել, որ այդ թուի մէջ չեն մտնում Հայաստանի ամբողջ երկաթուղային գծի բոլոր ծառայողները եւ ընտանիքները, որոնց թիւը հասնում է մինչեւ 32000 եւ որոնք ալիւր ստանում են Ալեքսանդրապոլի Բաշխման Կոմիտէից: Քաղաքային վարչութիւնից հաց ստանում են փողով բոլոր պետական եւ հասարակական ծառայողները, դրանց թում՝ քաղաքային, գաւառային նահանգական միլիցիան՝ թուով 15000 հոգի: Չքատր բնիկ ազգաբնակչութիւն 4500 անձ, գաղթականներ 5300 անձ, միջին դասը 19000 անձ, ընդամենը՝ 47000 անձ: Ունեւորներին հաց չի տրուում: Քաղաքում ձրի հաց ստացող չկայ: Եթէ ամբողջ երկաթուղին մտնի Ձեր հեռագրած 50000-ի մէջ, այդ դէպքում քաղաքի ազգաբնակչութիւնը կը մնայ առանց հացի: Շուկայում հաց դժուարութեամբ է ճարում, այն էլ ֆունտը 180-200 րուբլով: Խնդրում ենք Ձեռ հեռագրական կարգադրութիւնը:

Միւրան Գրիգորեան

Ժ⁴⁶

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՅՐ ԳԵՕՆՋԵԱՆԻ ԵՒ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆՈՒ
ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ⁴⁷ ՊԱՏՃԵՆԸ ԽՆԱՄԱՍԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ
ՎԵՐԱՇԽՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

24 Յունիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Ամերիկական կոմիտեն յայտնեց [թէ] ալիւր չկայ: Եթէ մինչեւ ամսոյս 26-ը նոր ալիւր չստացուի ստիպուած ենք դադարեցնել բոլոր պետական, հասարակական հիմնարկութիւններին, գաղթականութեանը, չքատր ազգաբնակչութեանը հացի բաշխումը: Շուկայում հաց չկայ, դրութիւնը օրհասական է: Խնդրում ենք Ձեր շուտափոյթ միջնորդութիւնը ուր հարկն է բաց թողնել մինչեւ նոր ալիւրի ստացուելը, զոնէ մի շաբաթով տեղիս ամերիկեան պահեստներից՝ քրինձ կամ լոբի: Վերջին գնացքը 14 վագոն ալիւրով Ղարաքիլիսայի շրջանի քաղցած ազգաբնակչութիւնը թոյլ չի տուել անցնել Ալեքապոլ⁴⁸: Կարգադրեցէք ամերիկացիների միջոցով ուղարկել շտապ կարգով 6-7 վագոն Ղարաքիլիս[այ]ի ալիւրից, թէւ յոյս չկայ, որ այդ ալիւրը մնացած լինի:

Նահանգապետ՝ Կարօ Սասունի⁴⁹

Քաղաքագլխի պաշտօնակատար՝ Գեօնջեան

ԺԱ⁵⁰

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ
ՊԱՐՈՅՐ ԳԵՕՆՁԵԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ
ՀՀ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ՊԱՐԵՆԱՅԻՆ ԾԱՆՐ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

25 Յունիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Երկու ամսից աւելի Ալեքսանդրապոլի բոլոր հիմնարկութիւնների ծառայողները, գաղթականութիւնը, չքաւոր ազգաբնակչութիւնը [սնունդ] ստանում է մի քառորդ ֆունտի հաշուով, այն ինչ Երեսանում, Ղարսում նրանք շարունակ ստացել են կէս ֆունտ: Դրութիւնը ծանր է: Խնդրում ենք կարգադրել բաշխելուն⁵¹ դրանից յետոյ բարձրացնել կէս ֆունտ, ինչպէս միւս տեղերում: Պահեստում ալիւր չլինելու պատճառով խնդրում ենք Ձեր միջնորդութիւնը մինչեւ նոր ալիւրի ստացուելը բաց թողնել տեղիս ամերիկեան պահեստներից համապատասխան քանակութեամբ բրինձ կամ լոբի, որով ազատած կը լինենք ծառայողներին, ազգաբնակչութեանը սովամահութիւնից: Եթէ մինչեւ ամսիս 26-ը լոբի կամ բրինձ չստանանք պարենի բաշխումը դադարեցում է ալիւր չլինելու պատճառով: Սպասում ենք հեռագրական կարգադրութեան:

Քաղաքագլխի պաշտօնակատար Գեօնջեան

ԺԲ⁵²

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ.
ՊԱՏՃԵՆԸ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ, ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ,
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻՆ՝⁵³
ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ ՕԳՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Յունիսի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Երկրագործական աշխատանքների այս եռուն շրջանին, երբ սկսել են գաւառումս խոտի հաւաքում, այդ ծանր աշխատանքներին գաւառիս ժողովուրդը սովամահութեան են ենթարկուել: Հիւժուած, քաղցած գիւղացիները անկարող են աշխատանք կատարել: Մեռնողների թիւը քանի գնում աւելանում է, աշխատանքները մնացել են երեսի վրայ ընկած. եթէ շուտապիոյթ օգնութիւն չհասցուի, ժողովուրդն իր աշխատանքի պտուղը չի վայելելու, խոտերն ու հացերը կը մնան անքաղ: Ալեքսանդրապոլի տեղավարական խորհուրդը խնդրում է ինչ միջոցով էլ որ լինի շտապով օգնութիւն հասցնել մեզ պատրաստ ամեն տեսակի եւ ձեւի փոխառութեան հացով, մինչեւ մեր հումձը:

Նախագահ՝ Միրզոյեան

ԺԳ⁵⁴

ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆՈՒ ԻՐԱՒԱՆՈՐՀՐԴԱՏՈՒ
ԳԵՈՐԳ ԽՈՅՏԵԱՆԻ՝⁵⁵ ՁԵԿՈՒՑՈՒՄԸ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ՝
ՆԱՀԱՆԳԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Յուլիս 1920թ.

Ալեքսանդրապոլ

Արդէն մի ամիս է, որ Ձեզ մօտ վարում են իրաւախորհրդատուի պաշտօնը: Մի ամիսը քիչ է նահանգի դրութեան եւ բոլոր հիմնարկութիւնների գործունէութեան հետ մօտ եւ մանրամասն ծանօթանալու համար, սակայն կարծում

եմ, որ բաւական է որոշ պատկերացում եւ ընդհանուր գաղափար կազմելու համար:

Արդ, նահանգի դրութեան կառավարումի անթերի քննադատութեան եւ գործունէութեան լրիւ ծրագիրը տալու յաւակնութիւնը չունենալով՝ թոյլ եմ տալիս ինձ զեկուցելու սոսկ տեղական եւ համապետական բնոյթ կրող մի քանի թերութիւններ[ի մասին], որքան հնար էր նկատել մի ամսուայ ընթացքում:

Ձեկուցումը կազմելիս ի նկատի եմ ունեցել, որ բացի նահանգապետ լինելուց անդամ էր Հայաստանի Պարլամենտի, նաեւ Ձեր դիրքը պետական կուսակցութեան եւ տաճկահայ մի կարեւոր հատուածի մէջ, հակառակ պարագային, որոշ խնդիրների յարուցումը անշուշտ կարող էր տարօրինակ եւ անտեղի թուալ:

Ռուսական մեծ յեղափոխութեանը անմիջապէս յաջորդեց թշնամու ներխուժումը մեր երկրի սահմանները, ազգի բոլոր ուժերի լարումը դիմադրելու, խուճապ, հերոսամարտ, ներքին՝ պետութեան ու պետականութեան խլրտումները, ընդվզումներն ու դաւադիր գործունէութիւնը երկրի ներսում ու նրանց զսպելու գերմարդկային ճիգերը: Այդպիսի դժնդակ, անօրինակ պայմանների մէջ, երբ փչում, քանդում էր հին պետական մեխանիզմը, հմի հետ սերտիւ կապուած շատ օրէնքներ ու դրութիւններ նոր պայմաններին ներհակ ու անպատեհութիւն էին ներկայացնում: Երբ անհրաժեշտ էին շտապ ու կտրուկ միջոցներ՝ աղէտը կանգնեցնելու եւ ընկրկելու, բնական է, որ միանգամայն անյարմար օրէնքների հետ յաճախ պիտի վտարուէին եւ այնպիսիները, որոնք խոչընդոտ չհանդիսանալով հանդերձ՝ օգտակար պիտի հանդիսանային գոնէ մինչեւ նորերու փոխարինուելը: Եւ ի վերջոյ պիտի հասնէինք մի դրութեան, երբ օրէնքներն ընդհանրապէս պիտի անտես առնուէին: Սակայն ինչ հասկանալի ու ներելի էր այն ժամանակ, անհանդուրժելի է դառնում այժմ երկամեայ պետական կեանքից յետոյ պետութեան մեր անհամեմատ կայուն դրութեան մէջ, երբ որոշ հնարաւորութիւն կայ օրէնքների եւ իրաւունքների կիրառութեան եւ նորերի մշակման:

Արդ անհրաժեշտ է անհողդողդ եւ անընկրկելի կանգնել օրինականութեան եւ իրաւաբանութեան ճամփի վրայ, անշեղ կիրառել գոյութիւն ունեցող բոլոր օրէնքները: Ամէն մի կամայական քնահաճ կարգադրութիւն, օրինազանցութիւն, եթէ նոյնիսկ ժողովրդի շահն ու օգուտը ի նկատի ունի այն, աւերելու քաղաքացիների իրաւակարգի իրաւունքի գիտակցութիւնն ու ընթրնումը, դուր քանալու նորանոր չարամիտ իրաւախախտումների եւ ապօրինութիւնների՝ անպայման կորստաբեր է հանդիսանալու մեր պետականութեան եւ ազգի շահերի: Անշահ, ապաժամ վնասակար օրէնքները պիտի փոխել տալ, սակայն քանի օրինական ձեւով չեն վերացուած՝ պակաս վնասակար են, քան բարենիտ կամայականութիւնները:

Մեկնելով այս ընդհանուր կէտից եւ մեր երկրի ներկայ դրութեան ընթրնումից, մատնանիշ պիտի անեն այն՝ ինչ իմ կարծիքով անհրաժեշտ է այժմ իսկ ձեռնարկել:

1. Նահանգապետը՝ տեղում հանդիսանում է միակ ներկայացուցիչը կառավարութեան, իր մէջ է ամփոփում իշխանութեան ամբողջականութիւնը, նրան են ենթարկուում բոլոր նահանգում գործող հիմնարկութիւններն ու վարչութիւնները, բացի զուտ զօրական ու դատաստանական, որոնք սակայն օժանդակիչ են քաղաքացիական իշխանութեան, որն իր հերթին նրանց վրայ է

յենում իրաւակարգի պահպանման գործում: Մինչդեռ մեզ մօտ միանգամայն ինքնիշխան են եւ Յինանսների եւ Երկրագործութեան եւ Աշխատանքի եւ միւս նախարարութիւնների ներկայացուցիչները: Նրանցից ամեն մէկն ունի իր սեփական քաղաքականութիւններն ու գործելակերպը, որով ստեղծում են մի աններդաշնակ, քառսային դրութիւն, խախտում միօրինակարգ հանրապետութեան զանազան մասերում, եւ շատ անգամ իրենց ծախող ընթացքով ջղայնացնում հասարակութեանը ու դժգոհութիւն առաջացնում կառավարութիւնը՝ տիրող կարգերի դէմ:

Քաղաքացիներին է տիրում նաեւ նահանգապետին ենթակայ վարչական օրգանների մէջ, նրանցից ոչ մէկը չի ճանաչում իր պարտականութիւնների ու իրաւունքների սահմանը, իրաւասութիւնների ընդհանուր շփոթ է տիրում: Նահանգական, գաւառական, քաղաքային միլիցիոներ, պարէտ, երկաթուղու միլիցապետ, տեսուչ, միլիցիայի եւ այլն, եւ այլն, սրանցից ամեն մէկը յաճախ ձեռնամուխ է լինում միւսի իրաւասութեան ենթակայ խնդիրների, շատ անգամ էլ զանց առնում իրենը: Անհրաժեշտ է վերջ տալ այս շփոթին եւ ճշգրտօրէն գծել իւրաքանչիւրի պարտականութիւնների եւ իրաւունքի շրջանակը: Կարելի է համարում ընդգծել երկու օրինակ:

1. Քաղաքային քրեական խուզարկու միլիցիայի հետ միաժամանակ քաղաքում գործում է նաեւ նահանգականը: Նահանգական միլիցիան ժամանակաւոր բան է, պայմանաւորուած՝ զօրքի ռազմաճակատներում գտնուելու եւ երկրում յուզումների ու խռչոք անկարգութիւնների հնարաւորութեան հետ: Ուստի կարելի է գտնում ուժեղացնել Քաղաքային Քրեական Միլիցիան եւ խուզարկութեան գործը վերապահել միայն վերջինիս:

2. Անհրաժեշտ է արտաքսել բոլոր յանցագործ տարրերը միլիցիայի շարքերից, մտցնել զօրանոցային կեանք եւ դասընթացներ հիմնել միլիցիաների համար, ուր նրանց կը ծանօթացնեն իրենց պարտականութիւնների եւ իրաւունքների հետ: Խիստ միջոցներ ձեռք առնել այն բիրտ ու կոպիտ վարմունքի դէմ, որ ունեն մեր միլիցիոներներից շատերը քաղաքացիների հանդէպ: Հիմնել քաղաքական հետապնդում, որը այժմ պատահական, անսխտեմ եւ շփոթ բնոյթ է կրում եւ զուրկ է արդիւնաւորութիւնից, եւ այդ ներկայ պայմաններում, երբ մեր պետութեան ազատութեան ներքին եւ արտաքին թշնամիները, մեր պետութեան կործանման համար անդուլ աշխատանք են գործ դնում մտքերը յուզելու, ժողովրդի ոգին տարրալուծում: Ուժեղ հսկողութիւն սահմանել հեռագրատանը, անհրաժեշտ է երկաթուղային եւ սահմանապահ պահակները հանրային ապահովութեան խնդրում անպայման ենթարկուեն Պ. նահանգապետին:

Աւելորդ չեն համարում այստեղ շօշափել մի խնդիր, որ համապետական նշանակութիւն ունի: Բոլշեւիզմի գլխաւոր վտանգն ու ոյժն միաժամանակ, որ նրան առժամանակ անյաղթելի է դարձրել, [այն է, որ] նրա վարակիչ յատկութիւնները ամեն մի պայքար նրա դէմ լծորդուած է եւ մարտնչողների վարկածան վտանգի հետ⁵⁶: Եւ մինչ ամեն մի համաճարակի երեւալու պէս միջոցներ են ձեռք առն[ւ]ում քաղաքացիներին այդ ախտի դէմ հակաթոյն ներարկելու, այս ամենից մեծ ու իւր հետեւանքներով աղէտալի համաճարակի դէմ ոչ մի միջոց չենք ձեռք առնում: Ոչ միայն գաւառում, այլ քաղաքներում ուր հոծ ինտելիգենցիա եւ հասարակական գործիչներ ունենք, չի մղում յարատեւ ու ծրագրուած պրոպագանդա, չեն ներկայացում ու բացատրում ժողովրդին

այն հետեւանքները, որ պիտի ունենայ բոլշեիկների ներխուժումը, չի ծանօթացում քստմենցուցիչ ու սալստու ազդող դժոխային կարգերի ու տեսութեան դէմ, որի մէջ տառապանքով մեռնում, ամայանում է Ռուսաստանը:

Թերթեր կարդալու հնարատրութիւն միայն առանձին անհատներ ունեն, դասախօսութիւնները վճարովի են եւ կրկին քչերին մատչելի, հասարակութեան լայն խաւերը, որոնք աւելի են մատչելի բոլշեիզմի վարակին, գուրկ են այդ ամէնից: Ամէն կերպ աշխատել ժողովրդի լայն մասսաները իրազեկ անել իրերի ու քաղաքական ռազմական դրութեանը: Այդ ամէնը ժողովուրդն իմանում է այս կամ այն ձեւով, ժողովուրդը իմանում է միայն այլանդակուած ու աղաւաղուած կերպով:

Այս անօրինակ անփութութիւնը յանցագործութեան հաւասար է, մեր կուսակցութիւնները, մանաւանդ Դաշնակցութիւնը մեծապէս դատապարտելի են այս գործում: Ժամանակն է իւր ձեռքում պահելու երկրի ընդհանուր ղեկավարութիւնն ու հսկողութիւնը, ազատել կուսակցական կարող գործիչներին, գաղափարական պայքար մղելու եւ ժողովրդի քաղաքական զարգացման գործին նուիրուելու: Տիրող կուսակցութեան չպատկանող, հայ պետականութիւնն ընդունող տարրերն էլ կը զգան, որ իրենք այս երկրի խորք զաւակները չեն, ու ժողովուրդն էլ կ'ազատուի այն մտածողութիւնից, թէ հայ հանրապետութիւնը միայն Դաշնակցութեանն է պատկանում: Այս կէտում դժբախտաբար, մեծապէս յանցաւոր են իրենք՝ դաշնակցականները, որ ամէն տեղ նոյնիսկ իրենց կուսակցական օրգաններում մեր ցեղի ու երկրի կոխը իբրեւ Դաշնակցութեան եւ բոլշեիզմի, Դաշնակցութեան եւ Մուսաւաթի⁵⁷ եւ այլն պայքար են ցուցադրում:

Աշխատելով բարձրացնել կուսակցութիւնը ականայ խորտակում են պետականութեան հիմունքները:

Ու միայն այս խնդրում չէ, որ կուսակցութիւնն ու պետականութիւնն իրար են խառնում: Երկրի կառավարութեան ու մարմինների գործունէութեան ամէն մի քայլափոխին կուսակցութեան շահերին տհաս կերպով մօտենալն ու անպատասխանատու մարդկանց միջամտելը զգացում է ամէնուրեք: Շատերն օգտւում են կառավարչական դեռ անկազմակերպ վիճակից, անպատիժ են մնում այնպիսի զեղծումների ու օրինազանցութիւնների համար որոնց մի չնչին մասը բաւական կը լինէր եւ դատելու եւ դատապարտելու: Մոմենտի անհրաժեշտ պահանջն է պետութեան եւ կուսակցութեան բաժանումը:

Երկրի ցաւոտ խնդիրներից մէկն է նաեւ Տաճկահայ հատուածի բռնած դիրքը մեր պետականութեան հանդէպ: Նրանց զինուած չեզոքութիւնը, զինուորական ծառայութեան չենթարկուելը, մասնաւոր անհատների հեղինակատրութիւնը ի վնաս պետականի, երկրի օրէնքների անտես առնելը, շատ անգամ կառավարչական գործում՝ իբրեւ պետական պաշտօնեայի արտօնութիւնները, ջլատելը հայութեան երկու հատուածների միջեւ մի եւ ընդհանուր հայրենիքի ու ազգութեան գաղափարը, մեծապէս վնասում եւ վնասելու են ոչ միայն ներկայ այլեւ Միացեալ Հայաստանի կազմակերպման եւ յարատեւութեան⁵⁸:

Ամենալուրջ ուշադրութեան առարկայ պիտի դառնայ նաեւ «Քաթարական հարցը» մեր հայրենիքում:

Ամէն մի հայի ու թաթարի համար անպայման ցանկալի պիտի լինի այս ժողովուրդների ցաք ու ցրիւ եկած մասերի համախմբումն ու զտումը այլացեղ

տարրերից: Սակայն այդ չափի տեղի ունենալ այնպիսի միջոցներով, որոնք ամենեին չնպաստելով գործին, միայն թշնամանք, վրեժխնդրության զգացմունք, դժգոհություն են յարուցանում մեր դէմ:

Քանի մեր հարեւան մահմեդական պետությունների սահմանները փակ են, այնտեղի հայության արտագաղթը եւ մեր թուրքության դէպի այդ երկիրները ներգաղթից առաջ, մենք պիտի ամեն ջանք գործ դնենք - իհարկէ խօսքս այն երեւոյթների ու դէպքերի մասին չէ, երբ մեր հանրապետության գոյութիւնը ներկայ կամ հնարաւոր ապագայ վտանգին են ենթարկւում - որ տեղական մահմեդականների մէջ քիմախնդրութիւն ու դժգոհութիւն չզարթեցնենք՝ այսօրուայ թոյլ թշնամին վաղը երկրի կրիտիկական վայրկեանին միանալով դրսի թշնամի ուժերի հետ, կարող է ճակատագրական հարուած հասցնել մեզ: Չափի մոռանանք, որ ընդհանրապէս գիղացուն, թէ հայ թէ թուրք եւ գոհ պահելու համար շատ բան հարկաւոր չէ՝ կեանքի, գոյքի ու պատուի ապահովութիւն: Եթէ այսօր թուրք գիղացիութիւնը, շատերը նաեւ հայերից տենչում են Նիկոլային⁵⁹ - Ռուս տիրապետութեանը, այդ միայն՝ վերել յիշուած ապահովութիւնների համար: Տուէք նրան այդ երեքը, նա ուրիշ տիրապետութիւն չի ցանկանայ:

Ես անտես չեմ առնում նրանց կրօնական մոլեռանդութիւնը, պանիսլամիստների ազդեցութիւնը: Դրանց դէմ մի միջոց կայ միայն մեր երկրի եւ հարեւան մահմեդական պետութիւնների միջեւ ապրող հայերի փոխանակութիւնը կատարել, սակայն մինչ այդ չափի ուժեղացնել ու բազմացնել առանց այդ էլ մեր բազում թշնամիների շարքը:

Մինչդեռ մենք մի կողմից անօգուտ եւ ոչ մի նպատակի չծառայող անապահով կացութիւն ենք ստեղծում Աղբաբայի թուրքերի համար, որը ոչ ուղիղ հասկացողութեամբ, կարող էր թուրքութեանը մեր երկրից քաշուելն արագացնել, միւս կողմից սակայն ստեղծել ենք մի կացութիւն, ուր մի Քիրբալու Մահմեդ, որը հեղինակն է եղել Աղբաբայի ըմբոստացման⁶⁰, այժմ էլ անհասկանալի կերպով հանդիսանում է մեր այդ շրջանում ինքնիշխան տէր՝ դատավարութիւն կատարում, պատժում, վարձատրում, նպաստում նոյնիսկ հայի կողմից թալանուած ու զրկուած թուրքին, ու այսպիսով այդ շրջանը դառնում է անհաղորդ մեր պետական կեանքին, ինքնամփոփ մի մարմին, որը իւր կապը մեր պետութեան հետ տեսնում է միայն մեր պաշտօնեաներին սիրաշահելու, նուիրաբերութիւնների մէջ, նկատում իրեն ժամանակաւոր մի մասը մեր երկրի, բռնադատուած մի շուկայ Զինանսների Նախարարութեան ներկայացուցչի գնումների, արտահանութիւն է կատարում միայն Վրաստան ու ժողովրդի մէջ կուտակում է անբաւականութիւնը դէպի մեր պետականութիւնը, որի օրէնքների[ց] եւ այլ բարիքների[ց] նա անմասն է:

Կարեւորագոյն խնդիրներից մէկն էլ պաշտօնեութեան խնդիրն է, պաշտօնեութեան միութեան անապահով կացութիւնը: Պաշտօնեութեան բազմաթիւ զեղծարարութիւնները: Այս երկու խնդիրները սերտօրէն շաղկապուած միասին, մեծապէս ազդում են երկրի ընդհանուր, եւ մասնաւորապէս տնտեսական, ֆինանսական դրութեան վրայ, ստեղծելով մի կախարդական շրջան:

Կառավարութիւնն ստիպուած պարբերաբար մեծացնում է նրանց ռոճիկը, դրան անմիջապէս յաջորդում է մթերքների գների աճումը, ու

այսպիսով անհնարին դառնում պաշտօնեայի համար քիչ թե շատ տանելի, բարեկեցիկ ու նիւթապէս ապահով կեանքի ստեղծումը:

Մարդկային ոգուն յատուկ բնական ընչասիրտքիւնը, ուռնացած պատերազմի տարրալուծուող ներգործութեան հետեւանքով՝ միանում է այս անապահով կացութեանը եւ որոշակի ազդում գեղծումների բնական, կենցաղական ու սովորական երեւոյթ դառնալով[ն]:

Պետական ու հասարակական գոյքը⁶¹:

Մթերքներն ու պահեստները թալանում են անխնայ, կաշառակերտքիւնը անսահման չափեր է ընդունում, ախորժակներն աւելի ու աւելի են զրգռում նոյնիսկ, Վրաստանը հեղեղում է Հայաստանից տարած կաթով, կակայով, անասուններով եւ այլն:

Կառավարութիւնը հնարատրութիւն չունի պարենատրելու ոչ միայն ազգաբնակչութեանը, այլ[եւ] կոպէկներ ստացող իւր պաշտօնէութեանը: Ազգաբնակչութիւնն ու պաշտօնեաները, որոնք չեն գողանում, կամ ստացած մթերքների պակասը լրացնելու հնարատրութիւն չունեն գնում են բազարում հենց կառավարչական եւ Ամերիկական պահեստներից գողացուած մթերքներից մեծ գումար վճարելով: Ստացուած ռոճիկը չի բաւականացնում, կառավարութիւնը ստիպուած է լինում աւելացնել եւ այսպէս՝ անվերջ:

Անհրաժեշտ է ապահովել պաշտօնէութեանը մթերքներով եւ ապա միեւնոյն ժամանակ ամենախիստ միջոցներ ձեռք առնել այդ անպատասխանատու թալանի դէմ: Այս երկու խնդիրն էլ չափազանց բարդ են, պահանջում են յատուկ եւ բազմակողմանի քննութիւն՝ ձեռնհաս մարմինների, հասարակական լայն խաւերի, մամուլի: Հապճեպ կազմուած պարտադիր կանոններով կռուել դրանց դէմ՝ անմտութիւն է: Ծրագրուած, յամառ կռիւ, լայն վերահսկողութիւն, պաշտօնէութեան նիւթական ապահովութիւն, անխուսափելի պատիժ գեղծումների համար, ովքեր էլ լինեն գեղծարարները:

Կռիւլ դասալքութեան, չարաշահութեան, պետական գոյքի իւրացման, աւազակութեան ու անարխիայի բոլոր երեւոյթների դէմ պիտի ընդունի ծրագրային եւ յարատեւ բնոյթ: Մեր հիմնական սխալներից մէկն էլ այն է, որ յաճախ հրատարակւում են կարգադրութիւններ, սահմանում են պատիժներ, որոնք ընդհանուր առմամբ մեծ չափերով անկիրառելի են եւ որոնք այդ իսկ պատճառով, մասամբ էլ մեր անվտանգութեան՝ մնում են մոռացութեան մատնուած: Օր[ինակ], հրացանների ու փամփուշտների յանձնումը. ամէն անգամ յայտարարւում է վարձատրութիւնը, որը տրուելու է հրացանի համար եւ պատիժը, որուն ենթարկուելու է սահմանուած միջոցին չներկայացնողը: Անցնում է մի ամիս, նորից վարձատրութիւն, բայց երբեք՝ պատիժ: Ժողովուրդը վարժում է այդ խիստ կարգադրութիւններին եւ անուշադիր անցնում նրանց մօտից՝ այդպիսի կարգադրութիւններ նա շատ է լսել ու կարդացել, գիտի, որ դրանք էլի կրկնուելու են, իսկ պատիժ չի լինելու:

2. Անհրաժեշտ է ըստ կարելոյն շտապեցնել Ալեքսանդրապոլի Շրջանային Դատարանի բացումը: Նպաստել դատարանին՝ իր գործառնութիւնների կատարման, յանցատրոնքներին գտնելու, վկաներին եւ մեղաւորներին ներկայացնելու գործում: Անհրաժեշտ է ունենալ նոր բանտ. վարչական կարգով ձերբակալուածները այժմ պահւում են քրեական եւ քաղաքական յանցագործների հետ, գոյութիւն ունեցող բանտը աւելի բարեյաջող դրութեան մէջ դնել:

Ամեն ազդեցութիւն գործ դնել վերջ տալու Արտակարգ Դատարանի դանդաղկոտութեանը, որով հասարակութեան միտքը շարունակ կապուած է պահում բոլշեիկների եւ նրանց դատի հետ:⁶² Յաճախակի ու պարբերական քննութիւններ կատարել նահանգական հիմնարկութիւնների, նրանց գործունեութեան եւ հաշիւների:

Հիմնել պաշտօնական «Նահանգական լրաբեր», պարտադիր որոշումների, պարտագանգների ու պատիժների ազդարարման, նրանց վկայագրերի յայտարարման եւ այլն, սահմանել պարբերական խորհրդակցութիւն նահանգապետի, Տեղավարութեան եւ Քաղաքային Վարչութիւնների մէջ:

Բժշկական եւ սանիտարական տեսակէտից, նահանգը բաժանել շրջանների, իրենց բժշկական կազմով, հիւանդանոցով, դեղատներով: Տեղումս գաւառը այս տեսակէտից միանգամայն անուշադրութեան է մատնուած: Նահանգը պիտի ունենայ նահանգական բժիշկ, անասնաբոյժ, ճարտարապետ, խճուղիների վերակառուցող, որոնք իբրեւ մասնագէտներ մեծապէս կ'օգնեն նահանգապետին իրենց մասնագիտութեան խորհուրդներով եւ ազատ ժամանակ ունենալով հնարատրութիւն կը տան նրան, ինչ անհրաժեշտ է նահանգապետին՝ երկրի ընդհանուր վերահսկողութեան կառավարութեան ու բարեփոխումների օրինագիծը պատրաստելու համար:

Ահա ընդհանուր գծերով այն խնդիրները, որոնց բարեյաջող լուծումը մասամբ պիտի նպաստի ուժեղ պետականութեան ստեղծմանը, գրաւելով պետականօրէն մտածող, կարող ուժերի ստուար մի թիւ, հնարատրութիւն պիտի տայ նրանց՝ իրենց հմտութիւնն հայրենիքի բարգաւաճմանը նուիրաբերելու:

Իրաւախոհ խորհրդատու՝ (Խոյեցեան)

ԺԴ⁶³

ՔԱՂԱՒԱՏՔ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԻ 1920 ԹՈՒՆԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16Ի ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

17 Օգոստոսի 1920թ

Ալեքանդրապոլ

Միաձայն որոշուեց. 1) Դադարեցնել ամսիս 15-ից հաց բաշխելը ազգաբնակչութեան միջին դասին եւ գաղթականութեանը. 2) Բնիկ չքաւորների թիւը կրճատել եւ տալ հաց միմիայն նրանց, որոնք կապուած են քաղաքի հետ եւ որոնք աշխատող ձեռքեր չունեն: 3) Այդպիսիների ցուցակագրութիւնը կատարել Խորհրդի Խնամատարութեան յանձնաժողովի միջոցով: 4) Չքաւորներին տրուելիք հացի արժեքը թողնել ֆունտը 10 բուրլի: 5) Սեպտեմբերից նշանակել հացի նոր գին համապատասխան հացահատիկների գնումների: 6) Հիմնարկութիւնների ծառայողներին եւ բանուորութեանը հաց տալ մինչեւ սոյն Օգոստոսի 25ը, որից յետոյ հաց տալ մայն նրանց, որոնք չունեն սեփական կամ համայնական ցանքս: 7) Դիմել կառավարութեանը բաց թողնել Քաղաքային Վարչութեան պետական ծառայողների համար պահանջուելիք հացի դէմ համապատասխան քանակութեամբ ալիւր պետական պահեստներից, եթէ այդպիսիք կան կամ կը լինեն ապագայում: 8) Դիմել կառավարութեանը յայտնել վարչութեան ազգաբնակչութեանը չքաւոր մասի պետքերի համար սոյն սերմացուն, որ բաժանել է կառավարութիւնը Ալեքսանդրապոլի շրջանում:

Իսկականի հետ ճիշտ է: Քարտուղար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԾ
ՀԱՄՕ ՕՀԱՆՁԱՆԵԱՆԻ ԿՈՉՆ ՈՒՂՂՈՒԱԾ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ՝
ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻՆ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

25 Օգոստոսի 1920թ.

Երևան

Հայաստանի ազգաբնակչության եւ զորաճակատի միջեւ սերտ կապ հաստատելու նպատակով կազմակերպուած է «Զորաճակատին Օժանդակող Կոմիտէ», որի կենտրոնը գտնուում է Երեւանում եւ շուտով ճիւղեր կը բանայ գաւառում եւ հանրապետութեան միւս քաղաքներում:

Հայաստանի Հանրապետութեան զօրքը, որ անձնուիրաբար եւ արիաբար պաշտպանում է հայրենիքի ազատութիւնն ու անկախութիւնը մեր քաղաքացիական թշնամիների դէմ, պէտք է մեր ժողովրդի յատուկ գուրգուրանքի առարկայ դառնայ, քանի որ նրան ենք պարտական մեր կեանքի, գոյքի եւ պատուի պաշտպանութիւնը: Այն երիտասարդը, որ զօրքի մէջ չէ, եւ այն քաղաքացին, որ զօրքի հետ չէ, հայ ժողովրդի թշնամին է: Զօրքը գոհուում է իր անձն ու հանգիստը, ժողովուրդը չպէտք է խնայէ իր գանձն ու աշխատանքը, քեթեացնելու այն ծանր պարտականութիւնը, որ անողոք պայմանների քերտով, բաժին է ընկած մեր քաջարի զօրքին: Ուստի ողջունելի է «Զորաճակատին Օժանդակող Կոմիտէի» կազմութիւնը եւ արժանի քաջալերանքի:

Հրամայում են պատշաճաւոր իշխանութիւններին աջակցութիւն ցոյց տալ այդ կոմիտէին եւ նրա գործակալներին, որ կարողանան յաջողութեամբ կատարել իրենց հանրօգուտ յանձնարարութիւնները:

Նախարարապետ՝ Հ. Օհանջանեան

ԶՕՐԱՃԱԿԱՏԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ՈՒՂՂՈՒԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԶԱՂԱՔԱՅԻՆ ԵՒ
ԳԱՒԱՌԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ՝ ԿՈՄԻՏԵԻՆ ԱԶԱԿՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

17 Սեպտեմբերի 1920թ.

Երևան

Ներկայեալ ուղարկելով Ձեզ «Զորաճակատին Օժանդակող Կոմիտէի» կանոնադրութիւնը եւ Պ. Նախարարապետի կոչը այդ առթիւ, զօրաց եւ ուտեստի ֆոնդ կազմելու հրահանգները, խնդրում ենք Ձեզ անյապաղ գործի անցնել եւ

- ա) Կազմակերպել Ձեր շրջաններում կոմիտէներ
- բ) Հետեւել կանոնադրութեան կէտերի գործադրութեանը
- գ) Զօրաց ուտեստի ֆոնդը կազմել:

Կոմիտէն լիայոյս է, որ կենդանի եւ հանրօգուտ այս գործը մեծ ոգեւորութիւն պիտի առաջացնի ժողովրդեան լայն խաւերի մէջ, պիտի արթնացնէ հասարակական նախաձեռնութեան ոգին, նրան անքակտելի կապերով պիտի կապէ մեր հայրենիքի պաշտպանութեան եւ վերաշինութեան գործի հետ, որոնց մէջ գտնուում է միակ գրաւականը մեր ներկայ եւ ապագայ անդորրութեան եւ ներդաշնակ զարգացման:

Զօրաց Օժանդակութեան Կոմիտէի նախագահ Բժ. Ղազարեան

ԶՕՐԱՃԱԿԱՏԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԿՈՄԻՏԵԻ
ԿԱԶՄԱԿԵՊՉԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԸ ԿՈՄԻՏԵԻՆ
ՕԺԱՆԴԱԿՈՂ ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

18 Սեպտեմբերի 1920թ.

Երեւան

1) Զօրաճակատին օժանդակող կոմիտեի մասնաճիւղերը կազմուելու են Հայաստանի Հանրապետութեան գաւառային քաղաքներում, շրջանային կենտրոնական վայրերում եւ գիւղերում:

2) Կոմիտեների կազմութեան ձեւը բողոքում է քաղաքային եւ գաւառային ինքնավարութիւնների հայեցողութեան, որ կարող է լինել ընտրովի կամ նշանակովի նայած տեղական յարմարութիւններին եւ պայմաններին:

3) Կոմիտեները բաղկացած պիտի լինեն քաղաքներում 5, շրջանային կենտրոններում 7, իսկ գիւղերում՝ 3 հոգուց:

4) Քաղաքային եւ շրջանային Կոմիտեներն իրենց շրջաններում լիազօր իրաւունքներ ունեն կանոնադրութեան ընդգծած սահմաններում, [նրանք] անմիջական յարաբերութիւն են պահպանում Երեւանի կենտրոնական կոմիտեի հետ, իրազեկ պահում նրան՝ իրենց գործունեութեան մասին եւ հրահանգներ նրանից ստանում:

5) Գիւղական կոմիտեներն ենթարկւում են շրջանային կոմիտեներին:

Զօրաճակատին Օժանդակող Կոմիտե

ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ ԲԺԻՇԿՆԵՐԻՆ՝ ԶԻՆԱԿՈՉԻ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՕՐԷՆՔԸ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սեպտեմբեր 1920թ.

Երեւան

Համաձայն Օգոստոսի 13-ի օրէնքի Հայաստանում գործող բոլոր բժիշկները, դեղագործները, ֆելդշերները, ֆելդշերուհիները⁶⁸ եւ գթութեան քոյրերը մինչեւ 45 տարեկան հասակը ենթարկւում են մոքիլիզացիայի, ոչնչացնելով նրանց տրուած բոլոր տարկէտումները, ենթարկելով նրանց գլխաւոր բժշկասանիտարական եւ ռազմասանիտարական վարչութիւնների վարիչներին, որոնք փոխադարձ համաձայնութեամբ նշանակում են նրանց թէ՛ ռազմական եւ թէ՛ հասարակական հիմնարկութիւններում:

Առաջարկւում են Չեզ գաւառում եւ քաղաքներում գտնուող վերոյիշեալ անձանց անմիջապէս ներկայացնել համապատասխան զինուորական պետին ու հաւաքատեղիները:

Այն անձինք, որոնք ունեն վկայական գլխաւոր բժշկասանիտարական վարչութիւնից ու ստորագրուած բժշկասանիտարական վարիչի ու ռազմասանիտարական վարիչի կողմից չեն կանչուում, բայց առնուում են հաշուի, կատարման մասին յայտնել Չինուորական դեպարտամենտին:

Իսկականը ստորագրել է Ներքին Գործոց Նախարար Արարատեանը

Իսկականի հետ ճիշտ է:

Գործավար՝ Վ. Մուրադեան

Ալեքսանդրապոլի Քաղաքային Ինքնավարութիւն

Պ. մահանգապետի կարգադրութեամբ ուղարկուած է սոյն օրէնքի
պատճենը ի գիտութիւն եւ ի գործադրութիւն:
Դիւանապետ
Գործավար՝ Վ. Մուրադեան

ԺԹ⁶⁹

ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝ 20-25 ՏԱՐԵԿԱՆ ՆԵՑՈՒԿ
ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ⁷⁰ ԳՈՐԾԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
Սեպտեմբեր 1920թ.
Երեւան

1. 20-25 տարեկան միայն մեցուկ զինապարտները ենթարկուած են զինակոչի, իսկ նրանց ընտանիքները պետութիւնից ամսական նպաստ են ստանում պետական ծառայողների ռոճիկների նուազագոյն չափով:

Ծանօթութիւն. Հայաստանի Հանրապետութեան բարձրագոյն եւ միջնակարգ դպրոցների աշակերտներն ու ուսանողները եթէ նոյնիսկ 19-25 տարեկան են, տարկէտում են ստանում, աշակերտները՝ մինչեւ 22 տարին լրացնելը, ուսանողները՝ մինչեւ 27-ը լրացնելը:

Ծանօթութիւն. Իրենց տարիքից անկախ տարկէտում են ստանում նաեւ Հայաստանի Հանրապետութեան 1. փոստ-տելեգրաֆիստները, 2. բաղիօկա-յարանների մասնագէտները եւ 3. երկաթուղիների մասնագէտներն ու հմուտ որակեալ բանուորները:

2. 25 տարին լրացրած մեցուկ զինապարտներին եւ 25 տարին լրացրած զինապարտների համար գործում են մեցուկների եւ տարկէտումների հին օրէնքները:

3. Այն բոլոր ազատումներն ու տարկէտումները, որոնք չեն համապատասխանում սոյն օրէնքին, կորցնում են իրենց ուժը եւ համապատասխան զինապարտները կանչուած են զինուորական ծառայութեան:

Վարչապետ՝ Օհանջանեան

Գործերի կառավարիչ՝

Իսկականի հետ ճիշտ է:

Գործավար

Ալեքսանդրապոլի տեղավարութեան
պ. մահանգապետի կարգադրութեամբ
ուղարկուած է սոյն օրէնքը ի գիտութիւն

Դիւանապետ

Գործավար

Ի⁷¹

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՄԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ⁷²
ՇԻՐԱԿԻ ՄԱՐՄԱՃԻԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՄ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ
ՍՏԵՂԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

23 Սեպտեմբերի 1920թ.

Երեւան

Ալեքսանդրապոլում հիմնուել է «Հայաստանի ընդհանուր մարմնակրթական ընկերութեան Շիրակի մասնաճիւղ», որը վերցնում էր իր վրայ պարտականութիւն զարգացնել եւ տարածել ֆիզիկական կրթութիւնը ամբողջ Շիրակի մահանգում: Այդ ընկերութեան մէջ մտնում են հետեւեալ

մասնաճիւղերը՝ «Բազէ» ընկերութիւն, «Ֆուտբոլի» խմբակներ, «Սկաուտական» խմբակներ, «Ատլետիկ» մասնաճիւղ եւ այլն:

Այդ բոլոր մասնաճիւղերի պարապմունքները կատարում են դպրոցից դուրսը եւ դրանց ընդհանուր ղեկավարը կազմում է մի վարչութիւն, որի նախագահը եւս էմ:

Որովհետեւ քաղաքային դպրոցներում մտցրած է մարմնամարզութիւն եւ ուսուցիչները այդ առարկայից թոյլ են, ուստի այդ ուսուցիչների հետ, նրանց համաձայնութեամբ այս շաբաթից կը սկսենք մարմնամարզութեան պարապմունքներ:

Յայտնելով այս բոլորը խնդրում են վարչութեանը ինձ ազատել իմ պաշտօնից իբրեւ ղեկավար ֆիզիկական կրթութեան Մեպտեմբերի 1-ից, որովհետեւ մեր դպրոցում պարապմունքները սկսուել են: Բայց ի նկատի ունենալով իմ աշխատանքը, ես խնդրում եմ, որ ինձ վարչութիւնը տայ այն մթերքները, որը ստանում են քաղաքային ծառայողները փողով:

Մ. Մարգարեան

ԻԱ⁷³

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ⁷⁴ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ, ԳԱՒԱՌԻ
ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՆ, ԶԱՂԱՔԻ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԻՆ՝ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ
ՋԻՆԱԿՈՉԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

4 Հոկտեմբերի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Շտապ յայտնեցէք ազգաբնակչութեանը հետեւալ պարտադիր որոշումը.

- 1) Համաձայն նախարարների խորհրդի Մեպտեմբերի 30-ին հաստատուած օրէնքի, ամբողջ Հայաստանը յայտարարում է զինուորական դրութեան մէջ:
- 2) Յայտարարուած է 1886 եւ 1887 թուականների ծնուածների զօրակոչ: 3) Անցեալում կանչուած բայց մինչեւ օրս չներկայացած բոլոր զինապարտները պարտաւոր են անյապաղ ներկայանալ համապատասխան զինուորական ատեաններին որոշած ժամանակամիջոցում:
- 4) Մինչեւ 1920թ. Օգոստոսի 1-ը բոլոր հիմնարկութիւնների կողմից գրուած զինուորութիւնից ազատման վկայականները համարում են անվաւեր, այդպիսի վկայական ունեցողները պէտք է անյապաղ ներկայանան զինուորական ատեանները նորից ստուգուելու:
- 5) 1920 թուի Օգոստոսի 1-ից յետոյ տրուած զինուորութիւնից ազատման վկայականները համարում են օրինաւոր միայն այն դէպքում, երբ նրանք տրուած են զինուորական ատեաններից կամ նախարարապետի կողմից, մնացած հիմնարկութիւնների կողմից տրուած վկայականները համարում են չեղեալ:
- 6) Չինակոչի ենթակաները, որոնք ժամանակին չեն ներկայանալ կամ ինքնական կը թողնեն իրենց զօրամասերը կը հաշուուեն դասալիքներ եւ 1919 թուի Յուլիսի 24-ին Նախարարների խորհրդի հաստատուած օրէնքի համաձայն կը ենթարկուեն մահուան պատժի Չինուորական դաշտային դատարանի կողմից:
- 7) Դասալիքներին ծառայութեան ընդունողները, հետը ապրողները, նրանց ակնյայտի թաքցնողները, զիւղական կոմիսարները եւ միլիցիայի բոլոր ծառայողները, որոնց շրջանում գտնուում են դասալիքներ իմ կողմից կը պատժուեն զինուորական ժամանակի ամբողջ խստութեամբ:
- 8) Պարտադիր որոշման հրատարակման օրից անցեալում այս հարցի վերա-

բերմամբ յայտարարուած բոլոր որոշումները եւ հրահանգները համար-ում են չեղեալ:

Ներքին գործերի Նախարար՝ Արարատեան
Զինուորական Բաժնի Տնօրէն՝ Առաքելեան
Իսկականի հետ ճիշտ է: Գործավար

ԻԲ⁷⁵

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՆ
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝
ԶԻՆԱԿՈՉԻՑ ԱԶԱՏՈՒԱԾ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
6 Հոկտեմբերի 1920թ.
Ալեքսանդրապոլ

Մինչեւ ամսիս 12-ը նախարարութեան անպայման ներկայացնել ցուցակը բոլոր պաշտօնեաների, որոնք ըստ օրէնքի ազատուած են զինակոչից: Նահանգապետի օգնականների, գաւառային, գաւառամասային կոմիսարների, միլիցապետների օգնականների եւ բոլոր միլիցիաների, որոնք մինչեւ Հոկտեմբերի 1-ը եղել են միլիցական ծառայութեան մէջ հաշուելով նրանց ծառայութիւնը դէպի զինուորական ծառայութիւնը: Այսինքն՝ տարիքը, նեցուկութեան հանգամանքը եւ ընդունելութեան ժամանակամիջոցը:

Ուղարկելու ցուցակը այն բոլոր պաշտօնեաների, որոնք համարուած են անփոխարինելի, ի նկատի ունենալով նաեւ ինքնավարութեան ծառայողներին: Այդ ցուցակների յապաղման դէպքում հաշուած բոլոր պաշտօնեաները կը գրկուեն վկայականներ ունենալու հնարաւորութիւնից եւ ըստ Մեպտեմբերի 31-ի եւ Հոկտեմբերի 4-ի պարտադիր որոշումների կարող են ձերբակալուել իբրեւ դասալիքներ:

Ներքին Գործերի Մինիստրի օգնական՝ Քրմոյեան
Իսկականի հետ ճիշտ է:
Ի տ. գործավարի՝ Վ. Մուրադեան
Սոյն կարգադրութիւնն ուղարկում է ի գործադրութեան
Դիւանապետ՝
Գործավար՝ Վ. Մուրադեան

ԻԳ⁷⁶

Ա. ԶԱՄԱԼԵԱՆԻ⁷⁷ ՀԵՌԱԳԻՐՆ ՈՒՂՈՒԱԾ
ՀՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐՈՒԹԵԱՆԸ՝ ՇԻՐԱԿՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ
ՏՐԱՍԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
6 Հոկտեմբերի 1920թ.
Ալեքսանդրապոլ

Տրամադրութիւնը Շիրակի նահանգում աւելի քան բարձր է, գրեթէ առանց ուժի դասալիքները եւ նոր զինուորականները հաւաքում են այնպիսի քանակութեամբ, որ նրանց դասաւորման խնդիրը մտահոգութիւն է պատճառում: Երկաթուղու ծառայողների եւ բանուորների զինակոչի նկատմամբ կառավարութեան կայացրած որշումը մինչեւ անգամ ուշացած է: Մինչ այդ նրանք մեծ թուով կամատր են գրուել եւ այժմ մենք դժուարութեամբ ենք կարողանում համոզել մասնագէտներին մնալ իրենց պաշտօնում: Ժողովուրդը զգում է, թէ ինչ փութանգ է կախուած հայրենիքի գլխին եւ պատրաստ է մինչեւ վերջը կանգնելու իր կառավարութեան քիկունքին եւ յետ վանելու յանդուգն բշնամուն:

ԻԴ⁷⁸

ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆՈՒ ՀԵՌԱԳԻՐԸ ՆԵՐՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ ԵՒ

ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՌՈՒԲԷՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻ⁷⁹ ԱՆՈՒՆՈՎ
Հոկտեմբերի 1920թ.

Շիրակ

Մոքիլիզացիան ուժեղացրինք: Վաղը անցնում ենք շրջան: Յոյս ունեն հաւաքել 1000 հոգի կամաւոր Ղարս ուղարկելու համար: Նահանգում միլիցիայից 60 ձիաւոր պահում են Աղբաբայի սահմանում: 40 ձիաւոր գործածում են դասալիքները հաւաքելու: Մնում է քաղաքում 50 զինուոր անհրաժեշտ կարգ պաշտպանելու համար: Մնացած 100 հոգին պաշտօնից արձակուած են անհամապատասխան լինելու պատճառով, որոնց տեղ նորերն ենք հաւաքում: Վերջին երեք օրուայ ընթացքում հաւաքել ենք մօտ 2000 դասալիք: Յոյս ունեն մօտ օրերս հաւաքել 2000, եւս՝ 3405:

Շիրակի նահանգապետ

Կարօ Սասունի

Իսկականի հետ ճիշտ է: Գործավար

ԻԵ⁸⁰

ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆՈՒ ՀՐԱՄԱՆԸ
ԴԱՍԱԼԻՔՆԵՐԻՆ ԲՈՆԵԼՈՒ ԵՒ ՊԱՏԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

27 Հոկտեմբերի 1920թ.

Շիրակ

Կարգադրում են բոլոր գիւղական կոմիսարներին ՉՈՐՍ ՕՐՈՒԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ գրաւոր եւ իրենց ստորագրութեամբ կազմել գիւղի բոլոր դասալիքների ցուցակը՝ յիշատակելով, թէ այժմ ուր են գտնուում եւ ներկայացնել ինձ ԱՆՉԱՄԲ: Այն բոլոր կոմիսարները, որոնք չեն կատարի իմ այս կարգադրութիւնը կամ կը տան անճիշտ տեղեկութիւններ, կը ենթարկուեն համաձայն Հայաստանի օրէնքների ամենախիստ պատժի մինչեւ ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏԻԺԸ:

Եթէ որեւէ գիւղի կոմիսարի պատասխանը չստացուի նոյնպէս պիտի նկատուի ծանր յանցանք եւ պիտի ենթարկուի պատժի:

Շիրակի նահանգապետ՝ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

ԻԶ⁸¹

ՇԻՐԱԿԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆՈՒ ՀԵՌԱԳԻՐԸ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ՝
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԸ ՀԱՒԱՔԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

29 Հոկտեմբերի 1920թ.

Ալեքսանդրապոլ

Ինքնապաշտպանութեան միանուագ տուրքը գնում է շատ յաջող գաւառում եւ քաղաքում: 117 միլիոնը բաշխուեց Աղբաբայի գիւղերի, իսկ 120-ը՝ Ալեքսանդրապոլի չորս գաւառամասերի վրայ: Գիւղացիութիւնը ուրախութեամբ մասնակցում է: Մինչեւ Նոյեմբերի 15-ը կը վերջանայ տուրքի գանձումը:

Նահանգապետ՝ Կարօ Սասունի

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԵԱՆԻ ՀՐԱՄԱՆԸ ՇԻՐԱԿԻ
ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻՆ ԵՒ ԶԱՂԱԶԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆԸ՝
ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆԸ ԶՕՐԱԿՈՉԻ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

30 Հոկտեմբերի 1920թ.

Երևան

Համաձայն մախարարների խորհրդի որոշման եւ Ռազմական Նախարարութեան հաղորդագրութեան յայտարարում են 26 եւ 27 տարեկանների այսինքն 1885 թուի Սեպտեմբերի 17-ից յետոյ ծնուածների 1886, 1887 զինակոչ մինչեւ օրս գործող օրէնքների եւ կարգադրութիւնների համաձայն: Զօրակոչը սկսել Հոկտեմբերի 29-ի առաւօտեան ժամը 9-ից եւ վերջացնել Նոյեմբերի 2-ին երեկոյեան ժամը 6-ին: Տարկէտումների վերաբերեալ ղեկավարուել սոյն թուի Օգոստոսի 1-ի եւ նրանից յետոյ հրատարակած օրէնքներով եւ կարգադրութիւններով: Զօրակոչի ենթարկում են նաեւ 2-րդ կարգի 26 եւ 27 տարեկան երկրապահները: Հրացան ունեցողները ներկայանան հրացանով: Զինակոչի ենթարկուածները պէտք է ներկայանան երեք օրուայ հացի պաշարով: 1920 թուի Օգոստոսի 1-ից առաջ զինուորական ծառայութիւնից ազատուելու մպատակով տրուած բոլոր վկայականները համարել անվաւեր եւ ենթարկել նրանց զինատեանում վերաքննութեան: Զինակոչի վերաբերալ աստիճանաբար յայտնել զինուորական գործերի դեպարտամենտին:

Ներքին Գործերի մախարար՝ Արարատեան

Իսկականի հետ ճիշտ է: Քարտուղար

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՕՐԱԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՔԵԱԶԻՄ ԿԱՐԱԲԵՔԻՐԻ
ՆԱՍԱԿՆ՝ ՈՒՂՂՈՒԱԾ ԳԻՒՄՐԻԻ ԶԱՂԱԶԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆԸ՝
ԶԻՆԱԳԱՂԱՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

7 Նոյեմբեր 1920թ.

Գիւմրի

Յարգելի քաղաքագլուխ,⁸⁴

Դաշնակցականների կողմից շարունակուած խառնակութեան հետեանօք, բանակս ստիպուեցաւ յառաջ խաղալ: Երկու կողմի կառավարութեան մէջ մինչեւ հաշտութեան պայմանները որոշուելը Արեւելեան հրամանատարութիւնը եւ Երեւանի կառավարութիւնը ընդունած են, որ Գիւմրին գրաւուի:

Գիւմրիի բերդը եւ կայարանը գրաւելու մասին որոշած զօրամասը այսօր ճաշից յետոյ որոշեալ տեղը պէտք է հասնին: Իմ ամենաբոլորն ցանկութիւնն է, որ զօրքը մտած ժամանակ ժողովրդեան կեանքին, պատուին ու գոյքին երբեք չպիտի դիպչին, խնդրում են, որ բոլորը վստահութեամբ իւրաքանչիւր մարդ իր գործով զբաղուի: Քաղաքի ապահովութիւնը եւ խաղաղութիւնը պահպանելը Ձեր խնամքին կը յանձնուին, մինչեւ որ Ձեր կողմից օգնութիւն չպահանջուի մեր կողմից երբեք միջամտութիւն չպիտի լինի:

Յատկապէս կը բարեւեն Գիւմրիի ժողովրդին: Թող իրագել լինեն այս յայտարարութեանը եւ եթէ ունեն մի ուրիշ ցանկութիւն, խնդրում են, որ մի մարմնի միջոցով ինձ յայտնեն այդ մասին:

Ընդունեցէք յարգանքներս

Արեւելեան զօրաբանակի հրամանատար Ֆերիկ⁸⁵

**ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ՝
ԵՐԵՒԱՆԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԱՏԱՐԱՆԻՆ՝ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԱՆԿՍԱՆ
ԺԱՄԱՆԱԿ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՈՆԸ ԼՔԱՅ
ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԻՆ ԴԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

8 Նոյեմբերի 1920թ.

Երեւան

Քաղաքական բնոյթ կրող մի շարք հանգամանքներ, որպիսին են ներկայ պարագայում պաշտօնը լքելը, քիկունքը քայքայելը եւ այլն եւ այլն, ենթակայ են արտակարգ դատարանին: Այդ օրինական յանցանքի մէջ մեղադրել մի շարք պաշտօնեաների, որոնք Ալեքսանդրապոլի անկման ժամանակ լքել են իրենց պաշտօնները, թողել հեռացել են քաղաքից, այժմ ձերբակալուած են կառավարութեան կողմից եւ պէտք է դատուեն: Որպէսզի նոքա երկար ժամանակ չգրկուեն իրենց ազատութիւնից առանց հարցաքննութեան, խնդրում եմ շտապ կերպով նշանակել դատարանիդ կողմից երկու քննիչ նրանց յանցանքները քննելու համար:

Ներքին գործերի նախարարի կարգադրութեամբ
Վարչական Դեպարտամենտի տեսուչ
Գործավար

Լ⁸⁷

**ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՂՈՐՂԱՆԵԱՆԻ
ՀԵՌԱԳԻՐԸ ՇԻՐԱԿԻ ՓՈԽՆԱՀԱՆԳԱՊԵՏ ԼՈՌԵՅՆԵԱՆԻՆ՝
ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆՈՒ ԳՏՆՈՒԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՄԱՍԻՆ**

10 Նոյեմբերի 1920թ.

Ղարաքիլիսա

Նահանգապետ Սասունին գտնում է Սոգոութի ⁸⁸գիւղում: Կապ ստեղծէք նրա հետ եւ ամէն օր հեռագրեցէք քաղաքի դրութեան մասին:

Ներքգործմին օգն. Ղորղանեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2905, ք. 83:

² Տես՝ Արտաշէս Բաբայեան, «Կարսի Անկումը», *Հայրենիք Ամսագիր*, 1923, թիւ 12. նաեւ՝ Հայկ Գնդունի, «Կարսի Անկումին Պատճառները», *Մարտկոց*, Փարիզ, 10 Նոյեմբեր, 1932. նաեւ՝ Վահէ Արծրունի, *Հայ-Տաճկական Պատերազմը, Հայ Սպայորիւնը, Շատախ*, Երեւան, 2002. նաեւ՝ Արարատ Յակոբեան, *1920Թ. Թուրք-Հայկական Պատերազմի Պատմութեան Փորձն Ու Դասերը*, Երեւան, 2004. նաեւ՝ Էդիկ Զոհրաբեան, *Թուրք-Հայկական Պատերազմը եւ Տէրութիւնները*, Երեւան, 1997. նաեւ՝ Կարօ Սասունի, «Հայ-Թուրքական Պատերազմը», *Հայրենիք Ամսագիր*, Բոստոն, 1926, թիւ 7:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 600, մաս 2, ք. 111:

⁴ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 181, ք. 4:

⁵ Այս մասին ուղղակի վկայութիւնների չենք հանդիպել արխիւային նիւթերում: Մենք անձամբ այն լսել ենք մեր ականատես տատից: Կայ նաեւ Իրազեկի յօդուածը՝ «Տաճկական Վայրագութիւններ Ալեքսանդրապոլի Գաւառում», *Յառաջ*, Հոկտ. 22, 1919: Թէեւ այն վերաբերում է 1918ին, բայց պայմանները նոյնանման են:

⁶ Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 126, ք. 126:

- ⁷ Վահե Արծրունի, *Հայ-Տաճկական Պատերազմը, Հայ Սպայորթներ, Շատախ*, Երևան 2002, էջ 286: Կարծում ենք, որ այս մասին անուղղակիորեն վկայում է մեր յօդուածում տեղ գտած 1920 Նոյեմբերի 7ի Կարաբեքիի նամակը ուղղուած Ալեքսանդրապոլի քաղաքագլխին: Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Լեւոն Սարգսեանը եւս դիմատրել է թուրքերին, որպէսզի անտելի կտորածներ չլինեն: Աղ ու հացով դիմատրելու իմաստը այն էր, որ անհրաժեշտ էր փրկել խաղաղ բնակչութեան ֆիզիկական գոյութիւնը, երբ արդէն թուրքերը մտնում էին կամ քաղաք կամ գիւղ, երբ որ արդէն հայոց բնակը պարտուած էր լինում, իսկ բնակչութիւնը՝ թողնուած բախտի քմահաճոյքին:
- ⁸ ՀԱԱ, ֆ.200, ց.1, գ.602, մաս 4, ք.255. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 529, մաս 4, ք. 129-34:
- ⁹ ՀԱԱ, ֆ.4033, ց. 1, գ. 127, ք. 167:
- ¹⁰ Սա առանձին միւր է, որ մեզ կը շեղի մեր միւրի բուն նպատակներից:
- ¹¹ ՀԱԱ, ֆ. 114, ց.2, գ. 10, ք.1-6:
- ¹² ՀԱԱ, ֆ.1022, ց.2, գ.189, ք.2:
- ¹³ ՀԱԱ, ֆ.1022, ց.2, գ.189, ք.2:
- ¹⁴ ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ.122, ք.1. նաեւ՝ ՀԱԱ, ֆ.1022, ց.3, գ. 275 A, ք.1-6:
- ¹⁵ ՀԱԱ, ֆ.1022, ց. 2, գ. 189, ք. 3. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ.448, ք.1. նաեւ՝ *Ժողովուրդ*, Երևան 1920, քիւ 182:
- ¹⁶ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 4, գ. 127, ք. 165-166. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 10, ք. 1-5:
- ¹⁷ Նոյն:
- ¹⁸ ՀԱԱ, ֆ.1022, ց. 3, գ. 323, ք. 1-2. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 62, ք. 3. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1157, ք. 13:
- ¹⁹ ՀԱԱ, ֆ. 4033, ց.4, գ.127, ք. 29:
- ²⁰ ՀԱԱ, ֆ. 114, ց.2, գ. 33, ք. 54-57:
- ²¹ ՀԱԱ, ֆ.144, ց. 3ա, գ.70, ք. 4. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1204. ք.1:
- ²² ՀԱԱ, ֆ. 144, ց. 3, գ. 4, ք. 10:
- ²³ ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ.2881, ք. 2. ձեռագիր:
- ²⁴ Հայկ Մելքոնեան - Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ է եղել 1919 Մեպտեմբեր-1920 Մարտին: Ազատուել է քաղաքագլխի պաշտօնից իր դիմումի համաձայն:
- ²⁵ Արտաշէս Բաբալեան - 1919 Հոկտեմբերի 31-1920 Յունուարի 8ը՝ Հանրային Խնամատարութեան եւ Աշխատանքի Նախարար: 1920 Յունուարի 8-Մայիսի 5ը՝ Հանրային Խնամատարութեան եւ Վերաշինութեան Նախարար:
- ²⁶ Համաճարակ:
- ²⁷ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2905, ք. 5. ձեռագիր:
- ²⁸ Պարոյր Գեօնջեան - Ալեքսանդրապոլի Քաղաքային Վարչութեան անդամ, Մայիս 4-Յունիս 4 1919՝ Քաղաքային Խորհրդի Նախագահ, Յունիս-Մեպտեմբեր 1919՝ քաղաքագլխի պաշտօնակատար, Ապրիլ-Յունիս 1920՝ քաղաքագլուխ, 1920 Յունիսից մինչեւ Մեպտեմբեր 16ը քաղաքագլխի տեղապահ եւ վարչութեան անդամ էր: Ազատուել է այդ պաշտօններից իր դիմումի համաձայն:
- ²⁹ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 161. ձեռագիր:
- ³⁰ Մինչեւ 1919 Յունիսի 5ը երկրում մթերքների հայթայթումը եւ բաշխումը կազմակերպելու աշխատանքով զբաղում էր Պարենամբերման Նախարարութիւնը: 1919 Յունիսի 5ին՝ վերջինիս լուծարումից յետոյ, այդ գործառոյթներն անցնում են Հանրային Խնամատարութեան եւ Աշխատանքի Նախարարութեանը: 1920 Յունուարի 8ին նախարարութիւնը վերանուանուել է Հանրային Խնամատարութեան եւ Վերաշինութեան Նախարարութիւն: Հայաստանում հացի եւ ալիւրի բաժանումը իրականացնում է Հայաստանի կառավարութեան կողմից, Մերձատր Արեւելի Ամերիկեան Նպաստամատոյցի Կոմիտէի (ՄԱԱՆ) հսկողութեամբ: Երկիրը բաժանուած էր շրջանների, որոնցից յուրաքանչիւրն ունէր իր բաշխիչ մթերման կոմիտէն: Այս կոմի-

տեղերը պատասխանատու էին ալիքի եւ հացի ճիշդ բաժանման համար իրենց շրջաններում: Նրանք պետք է ներկայացնեին բոլոր ճշգրիտ տուեալները, թէ՛ բնակչութեան եւ թէ՛ անհրաժեշտ ալիքի: Այս տուեալները ուղարկում էին Ամերկեան Կոմիտէին, որն էլ բաց էր թողնում համապատասխան քանակի ալիք այդ շրջանների համար:

³¹ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 163, հեռագրական ձեռագիր բլանկ:

³² Հանրային Խնամատարութեան Նախարարութիւնը ստեղծուել է Հայաստանի Հանրապետութեան երկրորդ կառավարութեան վերակազմաւորման ժամանակ 1918 Նոյեմբերի 4ին: Առաջին նախարարը Խ. Կարճիկեանն էր, որի սպանութիւնից յետոյ մօտ մէկ ամիս (15.11.1918-13.12.1918) Հանրային Խնամատարութեան նախարարի պաշտօնակատարը Արամ Մանուկեանն էր:

³³ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 176-179, հեռագրական ձեռագիր բլանկ:

³⁴ ՄԱԱՆի Կոմիտէի 1919 Դեկտեմբերի քիւ 22 հրամանով ալիքի բաժանումը տեղի էր ունենում Հայաստանի իշխանութիւնների կողմից Կոմիտէի հսկողութեամբ:

³⁵ Խօսքը 1918ի բուրքական արշաւանքների հետեւանքների մասին է: Ալեքսանդրապոլում ՀՀ ներկայացուցիչ Խոյեցեանի զեկուցումների համաձայն բուրքերն Ալեքսանդրապոլի շրջանից տեղափոխել էին սալերի 80%-ը, գերի տարել 12000 հոգու, գաղթականների քիւր հասել էր 45000ի: Նրանք Ալեքսանդրապոլի շրջանից խլել ու տարել էին 50000ից աւելի խոշոր եղջերաւոր անասուններ, 100000 ոչխար, 5000ից աւելի ձի, 2,5 միլիոն փութ ցորեն, 1 միլիոն փութ գարի, եւ զանազան մթերքներ: Թալանել ու տարել էին խանութների ապրանքները, մանուֆակտուրան, երկաթեղէնը, երկրագործական գործիքներն ու պարագաները, կահ կարասին, գորգերն ու կարպետները, ման՝ մեծ քանակութեամբ ապակեղէն, նոյնիսկ տանիքների քիթերը:

³⁶ Տեղական ինքնավարութիւն: 1920ին Հայաստանը բաժանուած էր չորս նահանգների. գաւառներում կազմակերպուած էին ինքնավարութիւններ:

³⁷ Աղբաբան 1920 Յունիսին կազմուած Շիրակի նահանգի կազմում էր. այժմ՝ Շիրակի Մարզի Ամասիայի շրջան:

³⁸ Ֆինանսների Մինիստր:

³⁹ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 217, ձեռագիր:

⁴⁰ Այսինքն խոստ է ուտում:

⁴¹ Միւրան Գրիգորեան - Ալեքսանդրապոլի Բաշխման Կոմիտէի Նախագահ:

⁴² ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 215-216, ձեռագիր:

⁴³ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 220-221, ձեռագիր:

⁴⁴ 1919 Մայիսի 22ին Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Սարգսեանի եւ ՄԱԱՆի Կոմիտէի տեղի ներկայացուցիչների միջեւ կնքուած պայմանագրով Ալեքսանդրապոլի որբանոցները յանձնուել էին Կոմիտէին:

⁴⁵ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 239-240, հեռագրական ձեռագիր բլանկ:

⁴⁶ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 247-248, հեռագրական ձեռագիր բլանկ:

⁴⁷ 1920 Մայիսի 5ին ստեղծուած Բիւրօ-կառավարութեան վարչապետը Համօ Օհանջանեանն էր:

⁴⁸ Ալեքսանդրապոլի կրճատ անուանումը:

⁴⁹ Կարօ Սասունի - ՀՅԴ Բիւրոյի անդամ: Հայաստանի խորհրդարանի անդամ, Մայիս-Նոյեմբեր 1920՝ Շիրակի նահանգապետ:

⁵⁰ ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 245-245 հեռագրական ձեռագիր բլանկ:

⁵¹ Յապատում՝ Բաշխող Կոմիտէ:

⁵² ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 249-251, հեռագրական ձեռագիր բլանկ:

⁵³ Ներքին Գործերի եւ Զինուորական Նախարարը Ռուբեն Տէր-Մինասեանն էր, երկրագործութեանը՝ Սիմոն Կրացեանը:

⁵⁴ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 49, ք. 88-93, ձեռագիր:

- ⁵⁵ Գեորգ Խոյեցեան - Մայիս-Դեկտեմբեր 1918ին՝ ՀՀ ներկայացուցիչ Ալեքսանդրապոլում, 1919 Ապրիլին՝ Ալեքսանդրապոլի Քաղաքային Խորհրդի Իրաւասունների ցուցակում ներկայացուած սոցիալիստական միութիւնների կողմից, երդուեալ հաւատարմատար, 1919 Դեկտեմբերին՝ Քաղաքային Վարչութեան քարտուղար, 1920 Մայիսից՝ Շիրակի նահանգապետ Կարօ Սասունու իրաւախորհրդատու:
- ⁵⁶ Նախադասութիւնը բնագրում թերի է: Կարդալ այսպէս՝ «Բոլշեւիզմի գլխաւոր վտանգն ու ուժն միաժամանակ, որ նրան առժամանակ անյաղթելի է դարձրել, նրա վարակիչ յատկութիւնն է: Ամէն մի պայքար նրա դէմ թորդուած է եւ մարտնչողների վարակման վտանգի հետ»:
- ⁵⁷ Պանքուրքիստական կուսակցութիւն, հիմնադրուել է Բաքում 1911ին, գործնէութիւնը վերսկսել է 1992ին:
- ⁵⁸ Բնագրում նախադասութիւնը թերի է:
- ⁵⁹ Նկատի ունի Ռուսական Կայսրութեան ցարին:
- ⁶⁰ ՀՀ ներքին կեանքի ամենացաւոտ հարցերից էին հանրապետութեան տարածքում ապրող մեծաթիւ թուրք-թաթարների խռովութիւնները: Դրանք հրահրում էին Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից: Թուրք-թաթարական խռովարարները չէին ենթարկւում Հայաստանի օրինական իշխանութիւններին: Հալածում էին հայ խաղաղ բնակչութեանը, կատարում ահաբեկչական գործողութիւններ, փակում ճանապարհները:
- ⁶¹ Ընդգծումը մերն է:
- ⁶² Մայիսեան ապստամբութեան ճնշումից յետոյ, կառավարութեան 1920 Մայիսի 8ին ընդունած որոշումով ստեղծուեց արտակարգ դատարան:
- ⁶³ ՀԱԱ, Գ. 205, ց. 1, գ. 801, 2րդ մաս, ք. 299 վաւերացուած ձեռագիր պատճեն:
- ⁶⁴ ՀԱԱ, Գ. 105, ց. 1, գ. 2883, ք. 3, տպագիր օրինակ:
- ⁶⁵ ՀԱԱ, Գ. 105, ց. 1, գ. 2883, ք. 2, տպագիր օրինակ:
- ⁶⁶ ՀԱԱ, Գ. 105, ց. 1, գ. 2883, ք. 3, տպագիր օրինակ:
- ⁶⁷ ՀԱԱ, Գ. 105, ց. 1, գ. 2905, ք. 93, վաւերացուած ձեռագիր պատճեն:
- ⁶⁸ Սանիտարներ:
- ⁶⁹ ՀԱԱ, Գ. 105, ց. 1, գ. 2905, ք. 29, վաւերացուած ձեռագիր պատճեն:
- ⁷⁰ 1919ի ամռանը ՀՀ կառավարութեան կողմից ընդունուած «Զինապարտների Հաշուառման Ու Զինակոչի Մասին» օրէնքի համաձայն զօրակոչից ազատում էր անաշխատունակ ծնողների ունեցող ընտանիքի միակ կերակրողը (նեցուկ):
- ⁷¹ ՀԱԱ, Գ. 105, ց. 1, գ. 2857, ք. 1-2, ձեռագիր:
- ⁷² Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը ստեղծուել է 1919ին Կ. Պոլսում: 1920 Յուլիսի 20ին ՀԱԸՄ վարչութիւնը ընդառաջ գնալով ՀՀ Կրթութեան Նախարար Նիկոլ Աղբալեանի դիմումին Հայաստան է գործուղում Վահան Չերազին, Տիգրան Խոյեանին եւ Օնիկ Եագմաջեանին՝ հայրենիքում սկսուողական շարժումը տարածելու համար: Միութիւնը Հայաստանում գործել է մինչեւ 1923: 1924ից այն իր գործունէութիւնը ծաւալել է Սփիւքում:
- ⁷³ ՀԱԱ, Գ. 105, ց. 1, գ. 2905, ք. 83, վաւերացուած ձեռագիր պատճեն:
- ⁷⁴ Սարգիս Արարատեանը ՀՀ Ներքին Գործերի Նախարարն էր 1920 Սեպտեմբեր-Նոյեմբերին:
- ⁷⁵ ՀԱԱ, Գ. 105, ց. 1, գ. 2905, ք. 72, վաւերացուած ձեռագիր պատճեն:
- ⁷⁶ ՀԱԱ, Գ. 200, ց. 1, գ. 343, ք. 59, հեռագրական ձեռագիր բլանկ:
- ⁷⁷ Արշակ Ջամալեան - ՀՀ Հեռահաղորդակցութեան Նախարար՝ 03.04.1920-23.11.1920:
- ⁷⁸ ՀԱԱ, Գ. 201, ց. 1, գ. 49, ք. 43, վաւերացուած մեքենագիր պատճեն:
- ⁷⁹ Ռուբէն Տէր-Մինասեան (1882-1952) - Հայոց Ազգային Խորհրդի անդամ, Հայաստանի Հանրապետութեան օրօք՝ Զինուորական Նախարար:
- ⁸⁰ ՀԱԱ, Գ. 201, ց. 1, գ. 49, ք. 82, տպագիր օրինակ:

- ⁸¹ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 49, ք. 74, հեռագրական ձեռագիր բլանկ:
- ⁸² Նոյն հեռագրի պատճենն ուղարկում է. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2905, ք. 72, վաներացում ձեռագիր պատճեն:
- ⁸³ ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 3000, ք. 1, մեքենագիր: Թարգմանութիւն ֆրանսերէնից:
- ⁸⁴ Խօսքը Լեւոն Սարգսեանի մասին է:
- ⁸⁵ Խօսքը վերաբերում է Կարաբեքիր փաշային: Ֆերիկը Օսմանեան բանակում ռազմական աստիճան էր: Կարաբեքիր փաշան այս աստիճանը ստացել էր 1920ի բուրք-հայկական պատերազմի ժամանակ:
- ⁸⁶ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 122, ք. 1, մեքենագիր:
- ⁸⁷ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 49, ք. 86, մեքենագիր:
- ⁸⁸ Սոցիալի - գիտ Հայաստանի հարաւ-արեւելեան մասում: Ներկայումս՝ Սառնաղիւր:

THE PROVINCE OF ALEXANDROPOL
PRIOR TO THE 1920 TURKISH-ARMENIAN WAR
(Summary)

KARINE ALEKSANYAN
karine.aleksanyan@yahoo.com

In this article the author publishes archival documents which shed light on the socio-economic and political situation in the western border areas of the Republic of Armenia at the time of the Turkish-Armenian War. The author analyses the reasons which led the local Armenian population to host the Turkish army with the traditional bread and salt.

In 1918 in the occupied regions of the Republic of Armenia, the Turks aimed not only at massacring the Armenians but at looting them too and ruining the economic basis of the Armenian state. Such a policy was aimed at making impossible the future existence of Armenia.

The short-lived Republic of Armenia bore the consequences of this Turkish policy. It was particularly felt in the Province of Alexandropol, which suffered the consequences of Turkish destruction long after the retreat of the Turkish army. Specifically agriculture including animal farming, was badly hit, which resulted in a famine that threatened the province from January 1919. The refugees who poured in as a result of the 1915 Armenian Genocide constituted a large part of the inhabitants in the province. These refugees lived in horrible conditions. They had gathered in the province with the hope of returning to their residences as soon as the borders were opened. However, prior to the return of Kars to the Republic of Armenia, thousands of Armenian refugees lost their lives. Their death caused plagues in Alexandropol province, which claimed further lives among the local population.

In May-April 1920, the famine reached unprecedented heights. The majority of the population was forced to eat only vegetables. The conditions were further worsened after the civil disturbances in May, and as a result the city faced absolute famine. The famished population of the province was even unable to harvest the crops, and the Province remained in dire socio-economic straits until November 1920.

Domestic politics was unstable too. Though the strict implementation of law and punitive measures by the Bureau-government that had come to power in May had suppressed the rebellion of the Bolsheviks, violation of civic rights had undermined the bases of statehood.

The strict measures of the Bureau-government led to the imprisonment of hundreds of people, while others were proclaimed outlaws. When Garo Sasooni was the chief administrator of Shirak province, partisan interests were prioritised at the expense of the state. The monopoly of party members and their disrespect for law and legality further

undermined the bases of statehood in general and the concept of the state among the population.

The Province, which was experiencing such socio-economic and political conditions, was surrendered to the Turks in accordance with the November 7, 1920 armistice. The Turks combined military action with diplomatic deception, and occupied the Province of Alexandropol, and kept it under military occupation for six months. These six months were enough to extensively loot the area and kill its defenseless population. In order to maintain its physical existence, the Armenian population of the area was forced to host the Turks with the traditional bread and salt and proclaim Soviet rule.

